14 ՄԱՅԻՍ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 78(5161)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Երբ պետությունը մոռանում է իր հերոսներին

Արցախյան ազատամարտի հենց սկզբից **Էդվարդ Ներսիսյանը** ռազմի դաշտում էր, «Տիգրան Մեծ» ջոկատի անդամներից էր։ Ասում է՝ պատերազմը սկսվեց, լքեցի տունս ու միայն զինադադարի համաձայնագիրը կնքելուց հետո տուն վերադարձա։ Թեպետ պատերազմը վաղուց է ավարտվել, սակայն իր հագուստը շարունակում է մնալ զինվորական բաճկոնը։ Մարտի դաշտում բազմաթիվ ընկերների է կորցրել, արժանացել մեդալների ու պատվոգրերի։ Ազատամարտիկների մեծ մասի թոշակը չի գերազանցում 50-60.000 դրամը։ «Փաստորեն մեր կատարածը, մի քանի՞ անգամ վիրավորվելն այդ արժեքն ունեն», դժգոհում էին ազատամարտիկները՝ պահանջելով արժանապատիվ կենսաթոշակ զինծառայողներին։

Այնուհետեւ բողոքի ակցիայի մասնակիցները շարժվեցին դեպի Ազատության հրապարակ, նախատեսում են մինչեւ այսօր ժամը 12-ը մնալ հրապարակում եւ սպասել պատասխանի։ «Եթե պատասխան չլինի, մենք չենք հանձնվի, մարտի դաշտում չենք հանձնվել, հիմա էլ չենք հանձնվի, սա պատվի հարց է», ասում է Ներսիսյանը։



*Լուսանկարը՝ Panorama.am-ի*

«Էս մեկը պաշտպանության նախկին նախարար Միքայել Հարությունյանն է տվել, էս մեկը՝ Մանվել Գրիգորյանը, սրանք ՀԱԲ-ից եմ ստացել, մյուսներն էլ՝ եսիմ, չեմ ուզում էս թեմայով խոսել։ Պետք էր, գնացել եմ կռվել եմ, մեդալով չի որոշվում, թե ինչ եմ արել հայրենիքի համար», հերթով մեդալներն է ներկայացնում Ներսիսյանն ու ավելացնում, որ իր կատարածն էլ, մեդալներն էլ այսօր ոչ մի արժեք չունեն։

«Որ մեզ մեկը մոտենում էր, ասում էր, որ Հայրենական պատերազմին է մասնակցել, մենք ջահել տղերք էինք՝ զգաստանում էինք, քարանում, հարգանք կար, պատիվ կար էդ մարդկանց հանդեպ։ Հիմա ոչ մի տեսակի հարգանք չկա, էս մեդալներն էլ են սուտ», ասում է նա։

Երեկ բազմաթիվ ազատամարտիկների հետ Ներսիսյանն էլ Ազատության հրապարակում էր։ Նախ նրանք երթով քայլել են դեպի կառավարության շենք, կառավարությունից եւ պաշտպանության նախարարությունից պահանջել բարելավել իրենց սոցիալական վիճակը։

Նախաձեռնության կազմակերպիչը ազատամարտիկ, պահեստազորի գնդապետ **Վոլոդյա Ավետիսյանն** է։ Նա ավելացնում է, որ առաջնահերթ պետք է վերանայել զինծառայողների կենսաթոշակի հաշվարկման կարգը։ Նրա խոսքերով՝ բազմաթիվ ազատամարտիկներ կմիանային նախաձեռնությանը, սակայն անգամ տրանսպորտի գումար չունեին, հետեւաբար ճիշտ կլիներ, որ հատկապես գյուղական հեռավոր վայրերում բնակվող ազատամարտիկների համար տրանսպորտը լիներ անվճար։

Ազատամարտիկների պահանջի կետերին կառավարությունն ու պաշտպանության նախարարությունն արդեն ծանոթացել են, թեպետ նրանք որեւէ հայտարարություն այս կապակցությամբ դեռեւս չեն կատարել, սակայն ազատամարտիկները լիահույս են, որ պետությունը չի մոռացել իր հերոսներին։

Հ. Հ.

# Լուկաշենկոն ատոմային անվտանգության հայ մասնագետներին հրավիրում է Բելառուս




«Ղարաբաղի ժողովուրդը ցանկանում է խաղաղություն եւ իր պատմական հայրենիքում ազատ զարգանալու հնարավորություն։ Նրանք ցանկանում են իրենց ինքնիշխանության միջազգային ճանաչմանը հասած այլ ժողովուրդների հետ հավասար հնարավորություններ», պաշտոնական այցով Երեւանում գտնվող Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ հանդիպմանն այսպիսի ընդգծում է արել Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը**։

Մամուլի համար արված հայտարարությունների ընթացքում Հայաստանի նախագահը նշեց, որ ինքը հավաստիացրել է Ալեքսանդր Լուկաշենկոյին, որ Հայաստանի դիրքորոշումը մնում է անփոփոխ՝ «մենք պատրաստ ենք այդ հակամարտության խաղաղ լուծմանը»։

Ներկայացնելով նոր ավարտված բանակցությունները՝ նախագահ Սարգսյանը իր խոսքում հիշեցրեց, որ նախագահ Լուկաշենկոյի հետ կանոնավոր հանդիպումներ են ունենում Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ), ԱՊՀ գագաթաժողովների, անցյալում նաեւ՝ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում, վերջին անգամ հանդիպել են Մոսկվայում դեկտեմբերին կայացած ՀԱՊԿ խորհրդի նիստի ընթացքում, իսկ մինչ այդ՝ նաեւ ԱՊՀ գագաթաժողովում, որտեղ այժմ Բելառուսը իր նախագահության շրջանում իրականացնում է Համագործակցության հետագա ամրապնդմանն ուղղված համալիր միջոցառումներ։ *Տես էջ 3*

# Նոր, փառավոր եկեղեցի Աբովյան քաղաքում



Այսօր՝ ժամը 3-ին տեղի կունենա Կոտայքի թեմի Աբովյան քաղաքի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման արարողությունը, որը կհանդիսապետի Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն՝ ընդառաջ եկեղեցու բարերար Գագիկ Ծառուկյանի խնդրանքին։

Եկեղեցու օծման արարողությանը կմասնակցի նաեւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն։ Օծման արարողությունից հետո նորակառույց եկեղեցում կամփոփվի նաեւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից բերված Սբ Հովհաննես Մկրտչի մասունքը։

# Երեւանի ավագանու վերջնական տեսքը

**ԿԸՀ-ն ի վերջո վերջնական տվյալներ հրապարակեց, ըստ որոնց ՀՀԿ-ն Երեւանի ավագանիում կունենա 42 հոգուց խմբակցություն, ԲՀԿ-ն՝ 17, «Բարեւ, Երեւանը»՝ 6։**

**Ի դեպ, ԲՀԿ-ում տարբեր տեսակետներ են հնչում մանդատները վերցնելու վերաբերյալ. մի մասը կարծում է, թե քանի որ 17 ձայնն ավագանիում բան չի վճռելու, իմաստ չունի մանդատները վերցնել, սակայն ուրիշներն էլ պնդում են, թե ընտրողն իր ձայնը տալով հույս է կապել ԲՀԿ-ի հետ, ու նրա տված քվեն անտեսելը եւ նրա խնդիրները չբարձրացնելը ճիշտ չի լինի։ Հավանաբար վերջին տեսակետը գերիշխող կլինի, համենայն դեպս այդ կարծիքին է ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Զոհրաբյանը։ Իսկ ահա երեկ՝ օրվա երկրորդ կեսին հայտնի դարձավ, որ ԲՀԿ-ում որոշել են վերցնել մանդատները։**

**Հիշեցնենք, որ «Բարեւ, Երեւանի» պահանջը՝ Երեւանի ավագանու ընտրություններն անվավեր ճանաչել, ԿԸՀ-ն մերժել է, ընդ որում դիմումի տեխնիկական թերության պատճառով։ Չնայած՝ ընտրությունների արդյունքները դատական կարգով վիճարկելու բարեւականների մտմտուքին՝ հավանաբար «Բարեւ, Երեւանը» եւս կվերցնի իր մանդատները։**

Ս. Խ.

# Օգնությունը հասավ ժամանակին

**Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն էր այցելել «Գրանդ Քենդի» ընկերության նախագահ Կարեն Վարդանյանը։**

**«Մենք ոչ մեկին չենք դիմել։ Կարեն Վարդանյանն ինքը եկավ եւ ձեռնամուխ եղավ։ Սա առաջին տարին չէ, հինգ տարի է, որ Կարեն Վարդանյանը օգնում է մեր մանկատանը»,- պատմում է մանկատան տնօրեն Հասմիկ Մկրտչյանը։ Հրդեհի հասցրած վնասի չափին ծանոթանալուց հետո Կարեն Վարդանյանը պատրաստակամություն հայտնեց հոգալ այրված հատվածի ու դրանից վնասված բուժսենյակների նորոգման ամբողջ ծախսը։ Դրանից բացի՝ Կարեն Վարդանյանի ֆինանսավորմամբ այս խմբում կնորոգվեն ու կթարմացվեն նաեւ սանհանգույցները, պատուհաններն ու ճաղավանդակները, որոնք եւս մշտապես խնդիր են եղել մանկատան համար։ Տնօրենը նշեց , որ սոցիալական ապահովության նախարարությունն էլ ժամանակին ձեռնամուխ եղավ խնդիրների կարգավորմանը։ Մեծ էր այս անգամ խնդիրը, եւ Կարեն Վարդանյանի աջակցությունը տեղին էր։ Կարեն Վարդանյանի այցից մեկ օր անց Մարի Իզմիրլյանի անվան**



**մասնագիտացված մանկատան այված հատվածում արդեն աշխատում են մասնագետները։ Շինարարական կազմակերպության նախնական հաշվարկի համաձայն, աշխատանքներն ավարտին հասցնելու համար կպահանջվեն 2 ամիս եւ մոտ 18-20 մլն դրամ**

**Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը հրդեհ էր բռնկվել մայիսի 4-ին՝ 18: 45-ի հատվածում։ Կրակը տարածվել էր երկրորդ հարկում գտնվող տղաների խմբում։ Դեպքի վայր հասած մարտական հաշվարկներին հաջողվել էր տեղայնացնել հրդեհը, այրվել էին միայն այն սենյակները, որտեղ գտնվել է հրդեհի օջախը։ Միայն երջանիկ պատահականությամբ այդ ժամանակ երեխաները ոչ թե խմբում, այլ բակում խաղալիս են եղել։ Նրանցից ոչ ոք չի տուժել։ Մանկատան տնտեսվար Սուսաննա Իսպիրյանը պատմում է, որ մանկատան այս հատվածը, որտեղ ապրում էին 8-ից 14 տարեկան 20 պատանի, կազմված է երեք սենյակից։ Մոտ 30 րոպե տեւած հրդեհաշիջման աշխատանքների ընթացքում ջուրը վնասել է նաեւ այդ խմբի ներքեւի հարկում գտնվող բուժսենյակները։ Բարեբախտաբար հաջողվել է առանց խուճապի եւ տուժածների իրականացնել տարհանումը եւ արագ մարել հրդեհը։**

**Մանկատան տնօրեն Հասմիկ Մկրտչյանն ասում է, որ հունվարի 1-ից մանկատունը գործում է որպես մասնագիտացված հաստատություն, եւ հատուկ կարիքներ չունեցող երեխաները հրդեհից հետո տեղափոխվել են Սոս մանկական գյուղ, Գավառի մանկատուն եւ Նագաշյան աջակցության կենտրոն։ Մնացել են հատուկ կարիքներ ունեցողները։ Ժամանակավորապես տղաներն ու աղջիկները տեղավորվել են նույն խմբում։ Տնօրենն անհանգստացած է՝ մանկատունը շտապ նորոգման կարիք ունի։ Հենց այդ կարիքը հոգալու նպատակով հրդեհից օրեր անց մակատուն էր եկել «Գրանդ Քենդի» ընկերության նախագահ Կարեն Վարդանյանը։ Նորոգումը սկսված է։**

# Ազատամարտիկը

Մի ոտքից կաղ ծերուկը՝ զինվորական համազգեստով, մայիսի 9-ին, կանգնած Եռաբլուր տանող ճանապարհին, անցորդներից փող մուրալով ներկայանում է որպես ազատամարտիկ ու անարգում է զինվորական համազգեստը: Բարձրաստիճան սպայի ուսադիրներով, թանկարժեք մեքենայից նոր իջած, որպես կանոն՝ բեղով զինվորականը, որ մոտենում է ու ինչ-որ գումար տալիս կաղ ծերուկին, եւս անարգում է զինվորական համազգեստը: Մուրացկանությունն այդպիսի բան է. հավասարաչափ անարգում է ե՛ւ վերցնողին, քանի որ նա, փաստորեն, սոված է մի միջավայրում, որտեղ «բոլորը կուշտ են», ե՛ւ տվողին, քանի որ նա կուշտ է մի միջավայրում, որտեղ, փաստորեն, սովածներ կան:

Բայց ազատամարտիկ լինելը, ավելի ճիշտ՝ ազատամարտիկ եղած լինելը աստիճանաբար մեզանում դարձավ ձեռքբերովի բան: Ազատամարտիկ սկսեցին կոչվել շատերը՝ «դուք բոլորդ ինձ պարտական եք» հոգեբանությամբ: Մինչդեռ չի կարող այնպես լինել, որ ազատամարտիկ լինեն շատերը, այդպես չի լինում, որովհետեւ պատերազմ չեն մեկնում շատերը: Ընդ որում պատերազմ չմեկնել ամենեւին էլ չի նշանակում պատերազմին չմասնակցել, այլ հարց է, որ ամեն պատերազմին մասնակից չի կարող ասել, թե ինքը ազատամարտիկ է, որովհետեւ պատերազմին մասնակիցը ըստ էության պատերազմի ժամանակ ապրողն է, այդպիսի բան է պատերազմը, ինչի մասնակիցներից «մի քանիսին» միայն կարելի է անվանել ազատամարտիկ: Սա գիշերը երազում ցեխոտ ու խավար խրամատը տեսնող մարդն է, ով հիշում է, թե ինչպես իր աչքի առջեւ խոցվեց ընկերը, նրա կողքինը, եւս մի քանիսը, թե ինչպես իրենք ազատագրեցին մի ավերակ ու վառված գյուղ եւ տեսան մանուկների դիակների կույտ, որոնց վրա մի կին անգամ չկար կենդանի, որ լացեր, «ստիպված» տղամարդիկ էին սեփական անզորությունից կրկնապատկված ցավից ոռնում... Նա այսքանից հետո, այս ամենի միջով անցած, բայց իր ներսի մարդուն պահպանած «հուշարձանն» է, ազգային, ոչ թե անկախության, այլ ազգային խորհրդանիշը: Նա չի կարող վախենալ մահից, բայց նրան հնարավոր է սպանել:

Իրականում ամեն բան, իհարկե, այսքան վեհ չէ: Բայց երբեք էլ ամեն բան վեհ չի եղել, հակառակ պարագայում վեհ ոչինչ չէր լինի... Անգամ ազատագրումը վեհ չէ, անգամ ազատագրողները կողոպտել են, իսկ կողոպտել են, որովհետեւ պատերազմի ժամանակ դժվար է զատորոշել ազատագրման ու թալանի սահմանագիծը: Հատկապես եթե պատերազմին մասնակցում են ոչ միայն ազատագրելու համար, այլեւ կողոպտելու, անգամ ազատամարտիկի կոչումը՝ ազատամարտիկից, եւ ավելի շատերը՝ հենց սրա համար: Պարզապես պատերազմի ժամանակ մի անգամ իր ազատամարտիկ քեռու մոտ «Վիլիս»-ով մեկնած այն ժամանակ տասներկուամյա պատանին այսօր «ազատամարտիկ» է դարձել: Ու սա բնական է, բնական է նաեւ, որ պատերազմից հետո շատ ազատամարտիկներ պետք է դառնան համայնքի ղեկավարներ՝ թույլ կամ ուժեղ, դա էական չէ: Շատերը պետք է հրամանատար դառնան ու բռունցքի, հաճախ էլ ոտքի մեկ հարվածով սպանեն, կոտրեն, ավերեն իրենց դիմաց կանգնած դեռահաս զինվոր պատանու՝ ազատամարտիկի ոգին: Բնական է եւ այն, որ շատերը նրանցից պետք է իրենց անտեսված զգան, շատերը պետք է չտեսնեն այս ամենն էլ, չլինեն էլ, շատերը պետք է հեռանան, մոռացվեն, չմեծարվեն: Ազատագրումը ըստ էության մեծարելու բան էլ չէ, ազատագրումը պահպանելու բան է:

Իսկ ազատամարտիկն ամենեւին ընդհանրական հասկացողություն չէ, մարդկային բնավորության գիծ, տեսակ չէ, քանի որ ազատամարտիկ կարող են լինել տարբեր մարդիկ: Օրինակ, այն կաղ ծերուկը՝ Եռաբլուրի ճանապարհին փող մուրալիս, կարող է եւ ազատամարտիկ լինել, բայց դա ամենեւին չի նշանակում, որ բոլոր ազատամարտիկներն այդ վիճակում են: Մեքենայից իջած բարձրաստիճան սպան, որ փող տվեց ծերուկին, եւս կարող է ազատամարտիկ լինել, տաքսու ամեն ինչից դժգոհ վարորդը՝ նույնպես, սրճարանների ցանցի սեփականատերը՝ եւս, բանակում փողով զինվորին տուն ուղարկող սպան էլ կարող է ազատամարտիկ լինել, Ռուսաստանում պատ շարող տղամարդն էլ... Նրանք շատ են ու տարբեր, ոմանք, ինչպես Ժիրայր Սեֆիլյանն է ասում, «տրվեցին նյութին», եւ հիմա նյութի կարիք չունեն, ոմանք, ինչպես Ժիրայր Սեֆիլյանը, ինչ-որ նոր պայքար ձեռնարկեցին՝ ազդարարելով, որ «ազգային-ազատագրական պատերազմը չի ավարտվել, քանի որ մեր նպատակը միայն հող ազատագրելը չէր, այլ նաեւ արդար Հայաստանի կերտումն էր», ոմանք էլ կարող են հոգնել ամեն օր իրենց՝ «նյութին տրված» մարտական ընկերների ընդունարաններում արդարությանը սպասելուց եւ միանան Սեֆիլյանի «նոր ազգային-ազատագրական պատերազմին»: Բայց սեփական երկրում արդարության հաստատմանն ուղղված գործողությունը չի կարող կոչվել պատերազմ, այլ՝ կռիվ է, ինչը խիստ անհրաժեշտ է յուրաքանչյուր երկրի ամեն հասարակության առաջընթացի համար:

Իսկ որոշ ազատամարտիկներ կամ ազատամարտիկ ներկայացողներ (այդպիսիք մեր օրերում ավելի շատ են, քան ազատամարտիկները) Սեֆիլյանի ձեռնարկած «նոր ազգային-ազատագրական պատերազմի» համապատկերում նստացույց են հայտարարել Ազատության հրապարակում: Նրանց պահանջները հիմնականում սոցիալական են, նրանք պահանջում են իրենց հասցվող կենսաթոշակների բարձրացում, իսկ մի ծերունի՝ Երեմ Ղուկասյանը, բնակարան է պահանջում «իրեն թալանած պետությունից»: Նստացույց հայտարարածների շարքերում է նաեւ, ինչպես ինքն ասաց՝ «Սեյրան Օհանյանի մարտական ընկեր», պահեստազորի գնդապետ Վոլոդյա Ավետիսյանը, բավական երիտասարդ մի տղամարդ, որը, սակայն, անհասկանալի է, թե ինչո՞ւ է հենց պահեստազորի գնդապետ: Հավանաբար այս ամենը կարեւոր չէ, կարեւորն այն է, որ մուրացկանությունը անարգում է ե՛ւ ուզողին, ե՛ւ տվողին, իսկ ամենակարեւորն այն է, որ Շուշիի ազատագրման կապակցությամբ ավելի շատ մարդ է հերոսության համար պարգեւատրվել, քան Շուշին ազատագրողներն են:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԹՌՈՒՑԻԿ ՌԵՊԼԻԿՆԵՐ

# Ավետարան ըստ ՀՀԿ-ի

ՀՀԿ խորհրդարանական խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** երեկ ասում էր, որ Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող ընդդիմադիր ուժերը, որ խոսում էին ընտրախախտումներից, չկարողացան այդպես էլ ընտրախախտումների փաստեր բերել եւ փոխանակ պատճառն իրենց մեջ որոնեն՝ իշխանությանը մեղադրելով են զբաղված: Մինչդեռ եթե չկա ընդդիմություն, մոդե՛լն է կիսատ մնում, ՀՀԿ-ի համար էլ դժվար է լինելու հաղթանակը պահել: Նա քննադատում էր միտինգ անելը, որից հուսահատ՝ մարդիկ տուն են վերադառնում: Իսկ իշխանությանը մնում է արդյունավետ աշխատել, աշխատանքի արդյունքն էլ պետք է հասարակության համար տեսանելի դարձնել, հարգել մարդկանց իրավունքները. որ ընդդիմություն չկա՝ ՀՀԿ-ն համ իշխանություն պիտի լինի, համ ... ընդդիմություն: Սահակյանն ասում էր, որ դիտորդներն էլ փաստարկ չունեն, իսկ նրանց գնահատականները կրկնում են ընդդիմության ասածները:



Ընդդիմությունն առհասարակ, ըստ Գ. Սահակյանի, զրոյական դաշտում է, եւ դրա պատճառներից է չմիավորվելը, իրենց առաջարկված վերահսկողական մեխանիզմները չընդունելը, չնայած՝ ուրախ էր նախագահական ընտրություններին Րաֆֆու ստացած 37 տոկոսով: Իսկ ավագանու ընտրություններում «Բարեւ, Երեւանը» ստացել է այնքան, որքան խորհրդարան անցնելիս («Ժառանգություն»-Մ. Խ.), այնպես որ ոչ իրավական, ոչ բարոյական հիմքեր ունի ընտրությունների անվավեր ճանաչման պահանջ ներկայացնելու. «Թագավոր լինելուց լավ բան» երգը (րաֆֆիականների-Մ. Խ.) ընդհանրապես ցաքուցրիվ արեց ընդդիմությանը:

Իշխանության անելիքները, ըստ Գ. Սահակյանի, շատ են: Նրանից, այո, դժգոհում են, բայց ՀՀԿ-ից լավ այլ կուսակցություն չկա, ով էլ գար իշխանության, բացի ՀՀԿ-ից, Ղարաբաղը կհանձներ (այ, այդ մեկը հազիվ թե-Մ. Խ.): 1 ուժ կա, որ Ղարաբաղը չի հանձնի (բացի, իհարկե, ՀՀԿ-ից, ըստ Սահակյանի), ՀՅԴ-ն, նա էլ սուղ քաղաքական ռեսուրս կամ ռեզերվ ունի, այնպես որ՝ ՀՀԿ-ն դեռ պետք է մնա իշխանության:

Ընտրությունների թեմայից բացի՝ Սահակյանն անդրադարձավ Ազատության հրապարակում բողոքի նստացույց անող ազատամարտիկներին, նշելով, որ պետբյուջեով ազատամարտիկների համար ինչ ասես արվել է, դա բավարար չէ, բոլորս պարտք ունենք, եւ հասարակությունը եւս պետք է իր վերաբերմունքը դրսեւորի. «Էս ընտրությունների ժամանակ ընդհանրապես ազատամարտիկներին, Ղարաբաղն էլ էին մոռացել», ասաց:

Արտագաղթի ցուցանիշի բարձր լինելու վերաբերյալ Գ. Սահակյանն իր բացատրությունն ուներ, դա կապեց նոր սերնդի օտար լեզուներ տիրապետելու եւ դրսում ապրելու գաղափարով գայթակղվելու հետ: Արտագաղթի հետ՝ ներգաղթ էլ կա, թե չէ Րաֆֆին ու Օսկանյանը Հայաստանում չէին լինի, ըստ նրա: Գ. Սահակյանը նաեւ ի պատասխան լրագրողական հետաքրքրասիրության նշեց, թե այսօր մասնակցելու է Աբովյանում Գագիկ Ծառուկյանի կառուցած Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման եւ բացման արարողությանը:

Մ. Խ.

# Մանկական նոր հիվանդանոց կբացվի Երեւանում

Առողջապահության նախարար **Դերենիկ Դումանյանը** երեկ ընդունել է Հռոմի «Թոր Վերգատա» բժշկական համալսարանի ռեկտոր Ռենատո Լաուրոյի ղեկավարած պատվիրակությանը, որը Հայաստանում է բարեգործական առաքելությամբ, իսկ առաքելությունը Հայաստանում մանկական նոր հիվանդանոց բացելն է:

Ըստ **Ռենատո Լաուրոյի**՝ Հայաստանում մանկական հիվանդանոց բացելու գաղափարը ծնվել է Իտալիայում՝ այդ ժամանակ Իտալիայում Հայաստանի դեսպան Ռուբեն Կարապետյանի հետ հանդիպումներից հետո:

Առողջապահության նախարարության փոխանցմամբ՝ Հռոմի «Թոր Վերգատա» համալսարանը, 40 հազար ուսանողով, հիվանդանոցներ բացելու արդեն իսկ մեծ փորձառություն ունի, կառուցել է մանկական հիվանդանոցներ Ալբանիայում եւ Կոնգոյում, իսկ Հռոմում վերջերս կառուցեց 800 մահճակալով հիվանդանոցային համալիր:

Պատվիրակության անդամները Դերենիկ Դումանյանին ասել են, որ Երեւանում մանկական հիվանդանոցի կառուցման վայրը հստակեցնելուց հետո ձեռնամուխ կլինեն միջոցների հայթայթմանը:

Իտալական պատվիրակությունը, ցուցաբերելով հետաքրքրություն նաեւ Հայաստանում ոսկրածուծի փոխպատվաստման հեռանկարի հանդեպ, պատրաստակամություն է հայտնել համագործակցելու ինչպես այդ, այնպես էլ դեղագործության ոլորտներում:

Ի. Պ.

# Հայաստանի խորհրդարանում քննարկում են աշխարհի ջրի հիմնախնդիրները

Հայաստանի Ազգային ժողովում երեկ բացվեց Ջրի եվրոպական 11-րդ փառատոնը: Փառատոնը տասնամյակից ավելի կենսագրություն ունի եւ որ երկրում էլ գումարվի՝ լավագույն առիթն է դառնում ողջ աշխարհում այժմ տրված ջրի հիմնախնդիրները քննարկելու, ջրային պաշարների կառավարման ուղղությամբ ներդրված ջանքերի մասին խոսելու եւ ոլորտում համագործակցության ձեւաչափեր մշակելու համար: Հայաստանում փառատոնը ներկայացնում են 15 երկրներ՝ անդամ 25 երկրներից: Փառատոնի մասնակից երիտասարդներին ուղղված խոսքում ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանը** նշեց, որ արդեն երրորդ տարին Հայաստանի Ազգային ժողովում գործում է Երիտասարդական խորհրդարանը, դիտելով որպես տարբեր խնդիրների, այդ թվում՝ ջրի հիմնախնդիրների վերաբերյալ համագործակցության հարթակ: ԱԺ նախագահի ելույթում այսպիսի մտքեր կային. «Ժողովրդական խոսք կա՝ ջուրը կյանք է: Այս արտահայտությունը պատահաբար չի ծնվել, այլ վկայում է, որ բոլոր ժամանակներում բոլոր ժողովուրդների



ու ազգերի համար ջուրն ունեցել է կենսական ու բախտորոշ նշանակություն: Որ ջրի համար ու ջրի պատճառով նույնիսկ պատերազմներ են տեղի ունեցել, ավելի է հաստատում եւ ընդգծում ասվածի կարեւորությունը: Սա նշանակում է, որ ջուրը նաեւ քաղաքականություն է, որը կարող է իսկապես ճակատագրական դեր խաղալ աշխարհաքաղաքական զարգացումներում», ասաց Հ. Աբրահամյանը՝ արդյունավետ աշխատանք մաղթելով փառատոնի բազմօրյա աշխատանքին: Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ **Անդրանիկ Անդրեասյանը** փոխանցեց նաեւ նախագահ Սարգսյանի ուղերձը:

Ողջույնի խոսքում նիստը նախագահողներ, Ջրի եվրոպական երիտասարդական 10-րդ պառլամենտի նախագահ **Մարիա Երմիլովան** եւ Երիտասարդական խորհրդարանի նախագահ **Կարապետ Կոզարովը** եւս ընդգծեցին ջրի կենսական կարեւոր նշանակությունը՝ ոլորտում հաջողության գրավական համարելով միջազգային ջանքի միավորումը: Երեկվա բացմանը եւ քննարկմանը միջազգային ճանաչմամբ ոլորտային մասնագետներ եւ հյուրեր էին մասնակցում: Հետագա օրերին նախատեսված են քննարկումներ, այցելություններ, մշակութային օրակարգ, իսկ Ջրի եվրոպական երիտասարդական պառլամենտի աշխատանքը կավարտվի մայիսի 19-ին կրկին Ազգային ժողովում:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Բերքի կորուստը՝ 45-50 տոկոս արդյունավետության հակակարկտային համակարգի հետեւանք

## *5 տարի առաջ ընտրվեց այս համակարգը նախկին՝ 94 տոկոս արդյունավետություն ունեցողի փոխարեն*

Գյուղատնտեսության նախարարությունում երեկ հրատապ խորհրդակցություն է կայացել մայիսի 12-ին Արմավիրի մարզում տեղացած ուժեղ կարկուտի հետեւանքով ստեղծված իրավիճակի գնահատման, վնասի չափերը նվազագույնի հասցնելուն ուղղված միջոցառումների կազմակերպման նպատակով: Կարկտահարությունից հիմնական վնասը կրել են Արմավիրի մարզի գյուղերի, Մեծամոր եւ Արմավիր քաղաքների մշակաբույսերը եւ ցանքատարածքները: Միաժամանակ, Արարատի մարզից մեր ստացած տեղեկությունների համաձայն, այստեղ եւս կարկտահարություն է եղել եւ նույնպես վնասներ են եղել: Գյուղատնտեսության փոխնախարարները եղել են Արարատյան դաշտի տարբեր բնակավայրերում, հանդիպել գյուղացիների հետ՝ պարզելու համար կորուստները եւ թե ինչ օժանդակություն կկարողանա տրամադրել գյուղնախարարությունը:

Ինչպես ակնհայտ է դառնում մայիսի 12-ի կարկուտից, մեր երկրում հրատապ է արդյունավետ հակակարկտային համակարգի ստեղծումը: Գյուղացիների վկայությամբ՝ այն վայրերում, որտեղ տեղադրված են հակակարկտային համակարգերը, դրանք գործել են, բայց, անարդյունավետ: Ո՞րն է դրա պատճառը, ինչո՞ւ հակակարկտային ծառայության առկայությունը չի փրկում գյուղացուն բերքի կորուստից եւ ի՞նչ իմաստ ունի նման համակարգն ընդհանրապես, եթե նրա գործելու դեպքում բերքն ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ ոչնչանում է: Այս հարցերի պատասխանները ստանալու համար հարկ է հետ գնալ 5 տարով, երբ կառավարությունը, 2008-ի սեպտեմբերի 18-ի որոշմամբ, հաստատեց Հայաստանի տարածքում մթնոլորտային վտանգավոր երեւույթների վրա ակտիվ ներգործության համակարգի ստեղծման ծրագիրը: Ծրագրով որոշվեց, որ պետք է ստեղծվի հակակարկտային այսպես կոչված գեներատորային համակարգը:



### Դավիթ Լոքյանը եւ արգենտինական հակակարկտային գեներատորային համակարգերը

Հայաստանում գազագեներատորային հակակարկտային համակարգերի ներդրումը սկսվել է 2004-ից: Այն ժամանակ գյուղնախարար Դավիթ Լոքյանի՝ արգենտինյան SAPOI. SA ընկերության հետ կնքված պայմանագրով, 15 այդպիսի ացետիլենային գեներատորներ տեղադրվել են Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում, որոնք կարկտահարությունից պետք է պաշտպանեն 1200 հա տարածք: 2007-ից այդ համակարգերը շահագործող «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ը կառուցել ու գործարկել է նոր 15 հակակարկտային համակարգեր, որոնցով պաշտպանության տակ է վերցվել եւս 1200 հեկտար գյուղատնտեսական տարածք: Պարզվել է, որ այս մեթոդը «բավականին արդյունավետ» է եղել թույլ, միջին եւ անգամ ուժեղ կարկուտների կանխման համար: Համենայն դեպս, այդպես է նշվել նաեւ կառավարության վերոնշյալ որոշման մեջ: Միաժամանակ, ընդգծվել է, որ շատ ուժեղ եւ աղետալի կարկուտների դեմ պայքարի արդյունավետության աստիճանը որոշելու համար անհրաժեշտ են եւս 2-3 տարվա գիտափորձարարական աշխատանքներ, ինչպես նաեւ Արմավիրի եւ Արագածոտնի մարզերից յուրաքանչյուրում 20-ական նոր հակակարկտային համակարգերի տեղադրում:

Այդ ժամանակ նշվել է, որ ացետիլենով գործող գազագեներատորային մեթոդի արդյունավետությունը կազմում է մինչեւ 50 տոկոս, քիմիական ռեագենտով գործող գեներատորային մեթոդը՝ 45 տոկոս: Քանի որ դրանք եղել են ամենաէժան տարբերակները, արտակարգ իրավիճակների նախարարությունում նախընտրել են այդ համակարգին անցնել, ինչին էլ հավանություն է տվել կառավարությունը:

Փաստորեն, նոր համակարգերի տեղադրումից 2-3 տարի անց կամ չեն պարզել, թե որքանո՞վ են գազագեներատորային հակակարկտային համակարգերն արդյունավետ ուժեղ եւ աղետալի կարկուտների դեմ, կամ էլ 45-50 տոկոս արդյունավետությունը բավարար են համարել: Ստացանք այս տարվա մայիսի 12-ի կարկուտի աղետալի հետեւանքները եւ բերքից զրկված հազարավոր գյուղացիական տնտեսություններ ու քաղաքային բնակչություն, դրանից բխող գնաճի հնարավոր բարձրացմամբ: Հարց է առաջանում, իսկ ունեցե՞լ ենք այլընտրանք եւ ի՞նչ հակակարկտային ծառայություն է գործել խորհրդային տարիներին: Պարզվում է, որ ունեցել ենք, ինչի մասին նշված է եղել կառավարության վերոնշյալ՝ 2008-ի որոշման մեջ:

### Խորհրդային հակակարկտային համակարգն ու դրա ճակատագիրը

Հակակարկտային ռազմականացված ծառայությունը Խորհրդային Հայաստանում ստեղծվել է 1964-ին: 1980-ականներին ուներ 11 հակակարկտային ռազմականացված կենտրոն՝ 60 հրթիռահրետանային մարտկոցով: Համակարգում աշխատում էին շուրջ 1700 մարդ: Հայաստանի այն ժամանակվա 15 վարչական շրջանների ավելի քան 1 մլն հեկտար ընդհանուր տարածքի վրա կատարվում էին կարկուտի դեմ պայքարի աշխատանքներ: Այդ աշխատանքներն իրականացվել են ավելի քան 400 միավոր զենիթային հրանոթներով եւ շուրջ 100 միավոր հրթիռային կայանքներով: Մինչեւ 1992-ը հակակարկտային պաշտպանության աշխատանքների արդյունավետությունը, ըստ վիճակագրական տվյալների, կազմել է 94 տոկոս: Կարկտահարությունից վնասված տարածքները տարեկան նվազել են միջինը 20 անգամ, իսկ ստացված եկամուտները գերազանցել են ծախսերն ավելի քան 5 անգամ: Ծառայությունն իրականացրել է նաեւ ակտիվ ներգործության աշխատանքներ Սեւանի ավազանում տեղումների արհեստական ավելացման ուղղությամբ: Այս դեպքում ստացված եկամուտները գերազանցել են կատարված ծախսերը 8-10 անգամ:

Սակայն 1992 -ից հակակարկտային աշխատանքները դադարեցվել են ֆինանսական հատկացումների բացակայության պատճառով: Հրթիռահրետանային տեխնիկայի, զինամթերքի, կապի ու տրանսպորտային միջոցների, ռադիոլոկացիոն համակարգերի մի մասը 1990-1993-ականներին ոչնչացել է սահմանամերձ գոտում մարտական գործողությունների ընթացքում, իսկ մնացած մասը՝ հանձնվել պաշտպանության նախարարությանը: Այս բոլոր տեղեկությունների մասին նույնպես տեղեկացել ենք կառավարության վերոնշյալ որոշումից: Այսինքն, դրանք հավաստի են եւ խորհրդային տարիների հակակարկտային 94 տոկոս արդյունավետության ունեցող համակարգի մի մասը դեռեւս պահպանված է եղել 5 տարի առաջ: Ի՞նչն էր խանգարում շարունակել աշխատել նման արդյունավետություն ունեցող այս մեթոդով, օգտագործելով եւ զարգացնելով պահպանվածը: Այս հարցի պատասխանը չստացանք ոչ 2008-ին, երբ այս թեմայի վերաբերյալ «**Ազգում**» հանդես եկանք համապատասխան հրապարակմամբ, ոչ էլ հիմա կստանանք: Այն ժամանակ արտակարգ իրավիճակների նախարարությունը ցանկություն հայտնեց պատասխանելու մեր հրապարակմանը, բայց այդպես էլ չստացանք այդ պատասխանը: Այն ժամանակ բառացիորեն գրել էինք, որ շատ հավանական է ու տրամաբանական, որ գեներատորային համակարգերն անարդյունավետ լինեն ուժեղ կարկուտների կանխման համար, ինչն էլ այսօր տեղի է ունենում:

### Նույն կոտրած տաշտակի առջե՞ւ

Այժմ, երբ անցյալում թույլ տրված եւ հետագայում չկանխված հերթական դիլետանտական եւ անհոգի որոշման պատճառով մեր գյուղատնտեսությունն ու գյուղացիները նման ծանր գին են վճարում, ի՞նչ պետք է արվի: Շարունակե՞նք շահագործել նույն համակարգը, որն իրեն չի արդարացնում անհրաժեշտության պարագայում: Թե գուցե հրաժարվե՞նք այդ իբր թե էժան, բայց իրականում շատ թանկ արժեցած համակարգերից, որոնք մեզ այսօր կանգնեցրին կոտրած տաշտակի առջեւ: Կառավարությունը պետք է ուժ եւ քաղաքական կամք ցուցաբերի, ընդունի նախկինում ընդունած որոշման սխալ լինելը եւ ապագայում նման տհաճ իրավիճակներից խուսափելու համար հրաժարվի հակակարկտային անարդյունավետ համակարգից եւ թեկուզ աստիճանաբար անցում կատարի նոր՝ ավելի բարձր արդյունավետություն ունեցող համակարգի, որքան էլ դա թանկ լինի: Ամեն դեպքում, դա ավելի թանկ չի լինի, քան պարբերաբար մեր գյուղատնտեսությանը հասցվող վնասի չափերը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Լուկաշենկոն ատոմային անվտանգության հայ մասնագետներին հրավիրում է Բելառուս

*1-ին էջից*

«Ուղիղ մեկ ամիս հետո մենք նշելու ենք մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակը: Այդ տարեթվին մենք մոտենում ենք ունենալով ոչ միայն երկկողմ համագործակցության համապատասխան մակարդակ, այլ նաեւ ամուր գիտակցում, որ այս տարիների ընթացքում կուտակված միջպետական փոխգործակցության դրական փորձը մեր ընդհանուր սեփականությունն է», ասաց Հայաստանի նախագահը:

Մայիսյան տոների համատեքստում Սերժ Սարգսյանը նշեց, որ հայն ու բելառուսն ուսուսի մարտնչել են Մեծ հայրենականում, հազարավոր հայեր են զոհվել բելառուսական ճակատներում, հարյուրհազարավորներն արիաբար փառավորել են իրենց անունը:

Նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն շնորհակալություն հայտնեց հիշողության ու պատմության համար, վստահեցնելով, որ հայ հերոսներին լավ են վերաբերվում իր երկրում, ինչի վկայությունը հազարավոր հայերի՝ երբեւէ նման հարցի առնչությամբ դժգոհության բացակայությունն է:

Լուկաշենկոն նաեւ խոսեց հայաստանյան ընտրական ծանր շրջանից՝ աջակցություն հայտնելով Սերժ Սարգսյանին նախագահության հաջորդող բոլոր տարիներին: «Հայաստանը կարեւոր եւ շատ մտերիմ գործընկեր է Անդրկովկասում», նշեց Բելառուսի նախագահը, միեւնույն ժամանակ ընդգծելով, որ Հայաստանի ու Բելառուսի միջեւ ապրանքաշրջանառության ներկա 60 մլն դոլարն «ուղղակի ամոթ է», եւ հարկ է այդ թիվը կրկնապատկել՝ «արհեստական խոչընդոտները հաղթահարելու հնարավորության դեպքում»:

Լուկաշենկոն, նշելով մի շարք ոլորտներում հայ-բելառուսական համագործակցության կարեւորությունը, առանձնակի շեշտեց ատոմային անվտանգության հարցերում այդ համագործակցության նշանակությունը՝ հաշվի առնելով, որ Բելառուսը նոր եւ իր պատմության առաջին ատոմակայանն է կառուցում: Լուկաշենկոն այդ հարցում մոտ 10 հայ մասնագետների Բելառուսում տեսնելու եւ փորձը ներդնելու հույս հայտնեց:

Երկու կողմերը կարեւորեցին նաեւ նույն օրը ստորագրված համագործակցության մի շարք փաստաթղթերը: Մասնավորապես, ստորագրված երկկողմ համագործակցության զարգացմանն ու խորացմանն ուղղված փաստաթղթերից նշենք հետեւյալը. համաձայնագրերը «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Բելառուսի Հանրապետության կառավարության միջեւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման բնագավառում համագործակցության մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Բելառուսի Հանրապետության կառավարության միջեւ միջուկային անվտանգության եւ ճառագայթային պաշտպանության ոլորտում համագործակցության եւ տեղեկատվության փոխանակման մասին», «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության եւ Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսության եւ պարենի նախարարության միջեւ գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին», փոխըմբռնման հուշագիրը «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության եւ Բելառուսի Հանրապետության արդյունաբերության նախարարության միջեւ համագործակցության զարգացման մասին» եւ «2013-2014 թվականներին ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության եւ Բելառուսի Հանրապետության սպորտի եւ տուրիզմի նախարարության միջեւ» համագործակցության ծրագիրը:

Երկու նախագահների հայտարարություններով մամուլի համար հասվածն ավարտվեց, իսկ Բելառուսի նախագահը գնաց Ծիծեռնակաբերդ:

**Վ. Պ.**

# Օպերան՝ թիրախում

## Ո՞ւմ ջրաղացին են ջուր լցնում

Եթե թերթատենք անգամ 100 տարի առաջվա մեր արեւելահայ ու արեւմտահայ պարբերական մամուլը, ապա օրաթերթերի յուրաքանչյուր համարում անպայման կգտնենք մշակույթի, մասնավորապես թատերական աշխարհում տեղի ունեցող երեւույթների մասին հոդվածներ՝ գրված թատերագիտական, երաժշտագիտական եւ մշակութաբանական տարբեր մոտեցումներով: Քննադատական միտքը համաչափ ընթացել եւ ուղեկցել է արվեստների զարգացմանը: Իսկ այսպիսի ավանդույթը միտված է եղել միայն հօգուտ մեր ժողովրդի բազմակողմանի տաղանդի զարգացման: Բնականաբար որեւէ ներկայացման մասին մանրամասն հոդվածներն արտահայտել են և՛ դրական, և՛ մերժողական, ինչպես նաեւ խորհրդատվական վերաբերմունք: Նման վերաբերմունքն իրական արվեստի ու նրա գործիչների համար զարգացման կարեւոր խթան է եղել եւ այսօր էլ շարունակում է լինել քաղաքակիրթ հասարակություններում: Ինչպե՞ս եղավ, որ ավելի քան երկու տասնամյակ այս ձայնը լռել է: Կորա՞ն մեր արվեստաբանները, երաժշտագետները, գրականագետները, ուրացավ հանդիսականը... Կարծես թե անապատում ենք հայտնվել: Ո՛չ հրաշալի եւ ո՛չ էլ ներկայացում հիշեցնող միրաժների մասին ոչ մի տող չենք գրում, չենք խոսում, չենք հիանում ու կարեկցում: Իսկ եթե հանկարծ ժամանակ առ ժամանակ ազնիվ մտահոգության բռնկումներ են լինում մամուլում, ապա «մաքառող միջակության» կողմից ինքնապաշտպանական այնպիսի սվիններ են հանդիպում, որ միայն ապշել կարելի է, թե ո՞ւր եւ ի՞նչ մակարդակի է հասել մեր «արվեստը»:

Պաշտպանվելու միակ ճանապարհ են ընտրել հարգարժան մարդկանց պիտակավորելու, իրենց կարգին սպառնալու տակտիկան, ստալինյան ժամանակները մտաբերելով ու զուգահեռներ անցկացնելով: Անգամ ներկայացումը չնայած հաղորդավարներն ու հաղորդման մասնակիցներից ոմանք հեռուստաէկրանից «խորհուրդ են տալիս» չգրել, չգրել, չգրել... մանավանդ ղեկավարությանը: Չէ՞ որ մենք գերմանացիներ չենք, որոնք օրերս հանդիսականի, քաղաքապետի եւ կառավարության մակարդակով արգելեցին եւ խաղացանկից դուրս շպրտեցին Վագների «Թանհոյզեր»-ի դյուսելդորֆյան մոդեռն ներկայացումը: Այն եւս սերժ-ավետիքյանական «Անուշ»-ի նման փորձարարական անհաջող մոդեռնիզմի զոհերից էր դարձել: Ավելին, «հանցավոր բեմադրիչը», Բուրկհարդ Կոզմինսկին, որ «արդեն ժողովրդին էր թողել» իր բեմադրությունը, ստիպված է վերադարձնել ծախսված միջոցները: Ա՜յ ժողովուրդ, որն իր ղեկավարության մակարդակով տեր է կանգնում եւ չի թույլատրում պղծել իր ազգային մշակութային արժեքները: Սա՞ էլ կապ ունի ստալինյան ժամանակների նրանց մտաբերման հետ:

Չմոռանանք ռուս մտավորականության ընդվզումը վերջերս Մեծ թատրոնում Չայկովսկու հայտնի օպերայի մոդեռն բեմադրության առիթով:

Տեղին հիշվեց նաեւ Կարեն Դեմիրճյանի կողմից «Պետրո»-ի բեմադրությունն արգելելը: Աճեմյանական բեմադրության մեջ գլխավոր հերոսի կերպարը հանճարեղ մարմնավորած ականավոր դերասանը ցանկացել էր սեփական մոտեցումներն արտահայտել իր բեմադրած պիեսը նոր ժամանակներում տեսնելով: Այս անգամ բեմադրիչը զիջել էր աճեմյանական Պետրոյին: Այո, արվեստների հովանավոր ու գիտակ երկրի առաջին քաղաքական այրի մակարդակով այս սխալը կյանք չունեցավ («Առավոտ», 1. 05.2013, էջ 6, Սամվել Դանիելյան, «Ավետիքյանը խմբագրել է 100-ամյա «Անուշը»»):

Սա հիշեցնում է նաեւ այն, որ երբեմն տաղանդավոր կոմպոզիտորներ, երգիչներ, արվեստագետներ փորձում են դիրիժորական փայտիկը վերցնել ու կանգնել նվագախմբի առջեւ: Որպես կանոն, շատ քչերին է հաջողվում չպսակազերծել հայտնի ու բարի համբավը: Լավագույն փիլիսոփայությունն այս առթիվ «ամեն մեկն իր իմացած գործով պիտի զբաղվի» նշանաբանն է:

Մի՞թե խղճի խայթ չեն ունենալու, որ մի հյուրախաղի պատճառով պիտի խայտառակեն և՛ իրենց, և՛ մեր մշակույթը, էլ չեմ ասում՝ Տիգրանյանի ու Թումանյանի ժառանգությունը: Ֆրանսիան չի փախչի, գուցե այնտեղ գնալու ավելի բարոյական ուղի ընտրվեր: Միեւնույնն է, հյուրախաղերի մասին վարձու հոդվածները (այստեղի օրինակով), հնարովի պատմությունները «մեծ հաջողության» մասին ի վերջո հօդս են ցնդում մեր հայրենակից հանդիսականների առաջին իսկ Երեւան զանգահարությունների հետ՝ «ամոթ չէ՞ գաք մեզ խայտառակեք...»:

Մի քանի տարի առաջ թատրոնների գեղարվեստական խորհուրդների հանցավոր ոչնչացումն այսօր մեզ այս տխուր փաստի առաջ է կանգնեցրել: Արվեստի ոչ մի քննադատ ոչ միայն չի ուզում խոսել, գրել, այլեւ փիլիսոփայաբար որոշում է ընդունել չայցելել թատրոններ, ցուցասրահներ ու չնյարդայնանալ: Միեւնույնն է՝ գերիշխում է հովանավորյալ տգիտությունը, պրոֆեսիոնալիզմի բացակայությունը, «մաքառող միջակությունը»:

Ադրբեջանցի մեր հարեւանները «Հայկական օպերան եւ պատմության զեղծարարության փաստերը» վերնագրով ինտերնետային կայքում գրում են, որ «XX դ. սկզբին հայ երաժշտաբեմական ստեղծագործություն չի եղել: Եթե իհարկե նկատի չունենանք Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան, որը ներկայացվեց Ալեքսանդրապոլում 1912թ. սիրողական ուժերով, 12 երաժիշտներից բաղկացած նվագախմբով: Ահա թե ինչու:

1959թ. հրատարակված «Երաժշտական հանրագիտարանում» առաջին հայկական օպերան համարվում է «ժողովրդա-կենցաղային», ավելի ստույգ՝ «իր սկզբնական վիճակում այն ոչ թե ավանդական հասկացությամբ օպերա է եղել, այլ՝ թատերական ներկայացում, զարդարված մի քանի ժողովրդական երգերով: «Օպերային լիբրետոներ» (1962թ., ռուս.) գրքում նշվում է, որ «Անուշ» օպերայի ստեղծումը եղել է Ա.Տիգրանյանի վաղեմի երազանքը: Սակայն չի կարելի չնշել այն փաստը, որ այս սյուժեի հիման վրա երկար աշխատել է հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասը: Սպենդիարյանը եւս մերժել է Թումանյանի կողմից իր պոեմի հիման վրա օպերա գրելու առաջարկը: Այսպիսով՝ «Անուշ»-ի սյուժեի հիման վրա եղած երաժշտական ձեւավորման բազմակի անդրադարձները ակնհայտորեն փաստում են Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի նախնական վիճակում եղած մակարդակը»:

Մենք բոլորովին էլ չենք պատրաստվում մեկնաբանել հայ երաժշտական մշակույթի ձեւավորման ավանդույթները, ինչպես նաեւ հայ եկեղեցական գործիչների կողմից այս ավանդույթը լոկ հայ մոնոդիկ երաժշտության ուղիով զարգացնելուն միտված ջանքերը: Բնականաբար նաեւ այն շրջանցողների նկատմամբ դրսեւորած դիմադրությունը:

Մենք ստիպված ենք նշել, որ իսկապես այդ տարիներին Կոմիտասի, Նիկողայոս Տիգրանյանի, Մակար Եկմալյանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի եւ հայ մյուս կոմպոզիտորների մեծ ֆորմատի ստեղծագործություններ ստեղծելու փորձերն ավաղ մնացել են որպես լոկ բարի ցանկություններ:

1912թ. Ալեքսանդրապոլում սիրողական ուժերով ներկայացված «Անուշ»ի բեմելը բաղկացած է եղել 4 գործողությունից եւ 7 պատկերներից: Լիբրետոյի հեղինակը եղել է Արմեն Տիգրանյանը, իսկ գործիքավորումը կատարել է 12 երաժիշտներից բաղկացած նվագախմբի ղեկավար Բուրկովիչը:

Արմեն Տիգրանյանի եւ Ս.Շաքիրյանի կողմից վերախմբագրված 5 գործողությամբ եւ 7 պատկերներից եւ վերջերգից (էպիլոգ) բաղկացած օպերան դիրիժոր Գ.Բուդաղյանի մեծ ջանքերի շնորհիվ վերագործիքավորվել է, համարեցվել սիմֆոնիկ մեծ նվագախմբի հնարավորություններին համապատասխան: Հենց Գ.Բուդաղյանն էլ 1935թ. մարտի 27-ին ղեկավարել է «Անուշ»-ի պրեմիերան: Նույն խմբագրման վերջնական տարբերակը կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղեւոնդյանի կողմից հարստացվել է եւ 1939թ. հոկտեմբերի 22-ին ներկայացվելով Հայ մշակույթի տասնօրյակի օրերին Մոսկվայի Մեծ թատրոնում՝ բուռն ու խանդավառ ընդունելության է արժանացել:

1950թ. ապրիլին, Արմեն Տիգրանյանի մահվանից մեկ ամիս անց կայացել է օպերայի նոր բեմադրությունը մեծահամբավ Արմեն Գուլակյանի կողմից: Դիրիժորական վահանակի մոտ է եղել ականավոր մաեստրո Միքայել Թավրիզյանը:

1956թ. եւս մեկ նոր, առավելագույնս հղկված բեմադրություն Արմեն Գուլակյանի կողմից: Նույն թվականին այն Հայ մշակույթի տասնօրյակի օրերին դիրիժոր Ռուբեն Ստեփանյանի ղեկավարությամբ Մոսկվայի Մեծ թատրոնում անասելի մեծ հաջողություն է ունեցել, ցնցելով խորհրդային երկրի մայրաքաղաքի արվեստասեր հասարակայնությանը: Հետագայում, նվագախմբի գործիքավորման հարստացման մեջ իր ավանդն է ունեցել նաեւ Բորիս Սակիլյարին:

«Անուշ» օպերան իր վերելքի հաղթարշավը շարունակել է Թումանյանի 100-ամյակի առթիվ կատարված աճեմյանական հրաշալի ներկայացմամբ, որը 1969թ. Օհան Դուրյանի ղեկավարությամբ Մոսկվայի Համագումարների պալատի դահլիճում բուռն հաջողություն է արձանագրել:

1994 թ. օպերայի զարգացման ճանապարհը շարունակում է Տիգրան Լեւոնյանի բեմադրությունը: Այն հաջողությամբ ցուցադրվում է ԱՄՆ-ում եւ Մոսկվայում:

Ներկայացումը 2004թ. բեմադրվել է երգիչ Գեղամ Գրիգորյանի կողմից:

Այսպիսով, նման փառավոր զարգացման ուղի անցած «Անուշ» օպերայի ներկայացումը, որի պատմությունը միահյուսված է մեր բեմարվեստի պայծառ անունների, երաժշտական մշակույթի աստղերի հետ, այսօր վերադառնում է «Ոսկե ձկնիկի» պառավի հին տաշտակին, ապացուցելու ոչ թե մեր ժողովրդի հանճարեղ ոգու գոյատեւումն ու զարգացումը, այլ՝ ադրբեջանական հանրագիտարանային բարբաջանքները:

Օպերային մշակույթի ավանդույթներին անտեղյակ վավերագրող Սերժ Ավետիքյանը արդյոք ի՞նչ նպատակ է հետապնդում սեւագրությունների մեջ իր պեղումներով: Սեւագրություններին կարելի է անդրադառնալ, եթե տվյալ գործի արդեն մշակված տարբերակները ոչնչացել են, կորել եւ մնում է միայն այս ճանապարհով այն վերականգնել: Ո՞ւմ ջրաղացին են ջուր լցնում Սերժ Ավետիքյանն ու նրա համախոհները:

Ավետիքյանական ջատագովների կեցվածքը փաստում է, որ նրանց չի հուզում ազգային մշակութային արժեքների խնդիրը: Նրանք ոչ թե փորձում են փրկել, շտկել իրավիճակը, այլ ամբողջ ուժով աշխատում են իրենց անորակ ներկայացման համար մեղադրել դիմացինին, շրջել հարցի էությունը, խնդիրը անձնական վիրավորանքների դաշտ տեղափոխելով: Սա չափազանց ցավալի փաստ է:

Ամենաթողության, անարխիայի այս մթնոլորտը ոչ մի լավ բանի չի կարող հանգեցնել: Հարկ է, որ տեր կանգնենք մեր ժողովրդի ստեղծած գոհարներին՝ Նախագահից մինչեւ պարզ հանդիսատես:

**ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**Դիրիժոր**

## Չափազանցված ընկալում

*Վագների «Թանհոյզեր» օպերայի նոր մեկնաբանությունը չընդունվեց*

**Դյուսելդորֆի օպերային թատրոնում մայիսի 9-ին՝ հինգշաբթի երեկոյան համերգային՝ նվագախմբի եւ երգիչների կատարմամբ է հնչել Վագների «Թանհոյզեր» հանրահայտ օպերան, որ շաբաթ՝ մայիսի 4-ին նույն բեմում իր առաջնախաղն էր ունեցել՝ առիթ տալով սուր բանավեճերի: Բեմադրիչ Բուրկհարդ Կոզմինսկին գերմանական միջնադարյան ավանդապատումների հիման վրա 1842-43 թվականներին գրված «Թանհոյզերի» լիբրետոն «տեղավորել էր» նացիստական ոճրագործության իր հեռադիտակում, բեմադրության մեջ գազախցիկներ, սպանության պատկերներ ներկայացնելով առիթ էր տվել, որ սկսվելուց 30 րոպե անց հանդիսատեսն իր բարձրաձայն բողոքը հայտնի, օպերասերներից 42-ը ներկայացման ժամանակ լքել էր լեփլեցուն դահլիճը, մի քանիսն էլ դիմել էին բժշկի՝ Հոլոքոստի տեսարանների ծանրությունը չհանդուրժելով:**

**Թատրոնի տնօրեն Քրիստոֆ Մայերը, ցավ հայտնելով կատարվածի համար, ասել էր, «թե մարդկանց առողջությունը ստեղծագործական ազատությունից վեր է դասում»: 2 ժամ հեռախոսով համոզել է բեմադրիչին փոփոխություններ կատարել՝ հատկապես բեմադրության սուր տեսարաններում, սակայն ապարդյուն: Գերմանիայի Մաննհայմ քաղաքի թատրոնի տնօրեն Կոզմինսկին, որ առաջին անգամ էր օպերա բեմադրում, նախընտրել է ստեղծագործական ազատությունը: Հրեական համայնքը ողջունել է թատրոնի ղեկավարության որոշումը:**

**Երգիչներն ու դիրիժոր Աքսել Քոբերը, որ բեմադրիչ Սեբաստիան Բաումգարթենի «Թանհոյզերը» ղեկավարելու է նաեւ ամռանը՝ վագներյան ամենամյա տոնին Բայրոյթում, հոտնկայս ծափերի են արժանացել:**

**Վագների 200-ամյա հոբելյանական այս տարում գերմանական մամուլը միանգամայն սպասելի է համարում, որ անդրադարձ կարվի նաեւ կոմպոզիտորի հակասեմական հայացքներին, նացիստական գաղափարախոսության վրա նրա ունեցած ազդեցությանը: Բայց անընդունելի է համարում, որ բեմադրիչը հենց հիշյալ ռոմանտիկ օպերան բեմադրելիս է փորձում նացիստական մոտիվը՝ հանրության ուշադրությունը սեւեռելով մեղքի եւ ապաշխարության, դահճի եւ զոհի վրա:**

**Երեկ մեր հարցմանն ի պատասխան դյուսելդորֆցի մի քանի թատերասերներ կարծիք հայտնեցին, թե բեմադրիչն անըմբռնելի աղերսներ էր գտել, նաեւ չափազանցված համարեցին հանդիսատեսի այդչափ «զգայնությունը», ինչպես նշել էինք սկզբում, մի մասը բժշկի դիմելու անհրաժեշտություն է զգացել: Մեր զրուցակիցները դժվարացան պատասխանել՝ «Թատրոնը բեմո՞ւմ է, դահլիճո՞ւմ, թե՞ այդ շենքի պատերից դուրս»: Մեկն էլ արձանագրեց, թե ինքն՝ օրինակ, շաբաթներ առաջ չկարողանալով տոմս գտնել, այդ օրը օգտվել է բոյկոտից՝ թանկարժեք տոմսը նետելու ցանկություն ունեցած, դահլիճը լքածներից մեկից նվեր ստանալով, դիտել է բեմադրությունը առաջին գործողությունից հետո, չի հասկացել բեմադրիչի մեկնակետը, բայց եւ փափուկ սիրտը չի էլ վատացել: Նրա ասելով՝ զարմանալի է, որ հասարակությունը հանդուրժում է սարսափ ֆիլմերը, իսկ թատրոնի բեմում տեսած արյունը հոգեբանական խանգարման է հասցնում:**

**Մեր կարծիքով, թեեւ Գերմանիան Եվրոպայի քարտեզին իր առաջատար լինելու դիրքն ամրապնդում է առաջին հերթին իր ամենօրյա հատուցմամբ, ապաշխարությամբ, բայց հատկապես նեոնացիստների ներկայությունը հասարակության մեջ նորոգում է այլատյացության հանդեպ տածած համակրանքն ու հակակրանքը: Հայ արդի քաղաքական տերմինաբանությամբ՝ հարաբերությունները բնականոն չեն դառնում: Այստեղից էլ երեւի՝ Վագների հանդեպ չափազանցված վերաբերմունքը:**

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# «Սիրիան գերեզման է դառնալու Էրդողանի համար»

## *Այս կարգախոսով Ռեյհանլիի բնակչությունը հակազդել է զույգ պայթյուններին*

Հաթայը նախկին Ալեքսանդրետի սանջակն է, 1939-ին Սիրիայից անջատվել է եւ կցվել է Թուրքիա: Այս հանգամանքը ինքնին ենթադրում է, որ տվյալ վիլայեթը սահմանակից է Սիրիային, զգալի բնակեցված արաբներով, որոնց մեջ մեծ թիվ են կազմում ալավիները: 2011-ի մարտին Սիրիայում առաջացած ճգնաժամն ու Թուրքիայի միջամտությունը ճգնաժամին հանգեցրեց արաբների համալրմանը ինչպես սիրիացի փախստականներով, այնպես էլ «Ազատ Սիրիայի բանակի» վարձկաններով, քանի որ Հաթայի սիրիական սահմանի երկայնքով փախստականների համար ճամբարներ էր ստեղծվում, իսկ վարձկանները բացի հենակետերում տեղակայվելուց, բնակարան վարձելու միջոցով հաստատվում էին Անտիոքում եւ վարչական այս կենտրոնի գավառներում:

Ընդհանուր առմամբ Հաթայում տեղացի արաբների հարաբերությունները թուրքերի հետ լարված բնույթ են ունեցել: Սիրիացի փախստականների վերաբնակեցումն ու «Ազատ Սիրիայի բանակի» վարձականների տեղակայումը Հաթայում էլ ավելի սրեցին լարվածությունը: Այն առումով, որ տեղացի արաբները սիրիացի փախստականներին նայում էին թշնամու, իսկ վարձականներին՝ մարդասպանի աչքով, թե սահմանն անցնում եւ Սիրիայում սպանում են իրենց եղբայրներին:

Նրանք Սիրիայի նկատմամբ որդեգրած քաղաքականության համար միաժամանակ դատապարտում էին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կառավարությանը, որ պաշտպանում է սիրիական ընդդիմությանը ընդդեմ նախագահ Բաշար Ասադի: Սկսած 2011-ից Անտիոքում բազմաթիվ ցույցեր են կազմակերպվել «Ձեռքերդ հեռու Ասադի վարչակարգից» կարգախոսով, տեղի են ունեցել նաեւ բախումներ բնակչության եւ վարձկանների միջեւ, որոնք տարածվել են Հաթայի գավառներում:

Մայիսի 3-ի համարում «Հաթայի ալավիները՝ թիրախ «Ազատ Սիրիայի բանակի» թուրք մոջահիդների» վերնագրով անդրադարձել էինք լարվածության հարցին՝ ընդգծելու Անտիոքում եւ գավառներում տիրող պայթյունավտանգ իրավիճակը: Հաթայի գավառներից է Սիրիային սահմանագիծ Ռեյհանլին, որտեղ պայթյունավտանգ իրավիճակը համադրվեց մայիսի 11-ին իրականացված զույգ պայթյուններով, որոնք պաշտոնական տվյալներով հանգեցրել են 46 մարդու սպանության, ավելի քան 100-ը վիրավորվել է:

Գավառում տիրող պայթյունավտանգ իրավիճակը ահաբեկչական պայթյուններ կազմակերպելու առումով Ռեյհանլին դարձրել էր խիստ նպաստավոր կազմակերպիչների համար: Ովքե՞ր են դրանք: Դժվար է հարցին միանշանակ պատասխանել, սակայն Թուրքիայի ղեկավարները միանշանակ պատասխանեցին, այն էլ՝ պայթյուններից մի քանի ժամ հետո: Փոխվարչապետ Բեշիր Աթալայը հայտարարեց, որ ձերբակալվել է 9 կասկածյալ, եւ կասկածյալները խոստովանել են իրենց առնչությունը պայթյուններին:

Այնուհետեւ Ազգային հետախուզական կազմակերպությունը՝ MIT-ը, պարզեց, որ ձերբակալվածները սիրիական գաղտնի ծառայությունների՝ Ալ Մուխաբարաթի գործակալներ են: Դա հաստատեց Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, իսկ թուրքական կենտրոնական «Հուրիեթ», «Վաթան», «Միլիեթ» եւ «Սթար» թերթերը հիմնավորեցին Դավութօղլուին: Այդ ընթացքում «Սաբահը» եզրակացրեց. «Ասադը Ալ Մուխաբարաթին «Թուրքիան դժոխքի վերածելու» կարգադրություն տվեց, որը գործի անցնելու ազդակ հանդիսացավ նախապես Ռեյհանլիի ներթափանցած գործակալների համար»:

Մինչ պայթյունների համար նախագահ Ասադի վարչակարգին մեղադրում էր նաեւ վարչապետ Էրդողանը, մեղադրանքին հակազդեցությամբ մայիսի 12-ին արձագանքեց Սիրիայի տեղեկատվության նախարար Ումրան ալ Զուբին՝ հայտարարելով. «Ոչ ոք իրավունք չունի Թուրքիայում տեղի ունեցած պայթյունների համար կամայականորեն մեղադրել Սիրիային: Դրանց պատասխանատուն հենց Թուրքիան է: Էրդողանը ջանում է հաղթանակ կերտել թուրքերի եւ սիրիացիների արյան վրա»:

Թուրքական եւ սիրիական կողմերի փոխադարձ մեղադրանքը ենթադրելի է: Սակայն դա հազիվ թե պատասխանի «ովքե՞ր են կազմակերպել պայթյունները» հարցին: Հետեւաբար կազմակերպիչներին եթե ոչ բացահայտելու, ապա գոնե դրանց մասին պատկերացում կազմելու լավագույն եղանակը ճշտելն է, թե ում են ձեռնտու պայթյունները: Միանշանակ չէ նաեւ այս հարցի պատասխանը: Ակնհայտ է սակայն, որ Ռեյհանլիի զույգ պայթյունները իրականացվել են վարչապետ Էրդողանի ԱՄՆ նախատեսվող այցելությունից առաջ եւ Ալ Նուսրայի պարագլուխ Աբու Մուհամմեդ Էլ Ջեւլանիի սիրիական ռազմաօդային ուժերի ձեռնարկած հարձակման հետեւանքով սպանությունից հետո:

Առաջին հայացքից գուցե տրամաբանական թվա, որ Թուրքիայում բազմաթիվ գործակալներ ունեցող Ալ Նուսրան սպանության համար վրեժխնդիր լինի նախագահ Ասադին պաշտպանող Ռեյհանլիի բնակիչներից: Սակայն չմոռանալ Ժնեւում նախատեսվող Ռուսաստան-ԱՄՆ բանակցությունները Սիրիայի ճգնաժամի հարցով: Հաշվի առնելով դրանք, պետք է ճշտել նաեւ, թե ում է ձեռնտու այս բանակցությունների կացնահարումը: Համենայնդեպս, Թուրքիան Սիրիայի դեմ անհապաղ ռազմական գործողությունների դիմելու կողմնակից է, իսկ Ժնեւյան բանակցությունները հակասում են գործողությունների տրամաբանությանը:

Ի դեպ, ինչպես նշում է Odatv.com կայքէջը, պայթյունի հաջորդ օրը Ռեյհանլիում կազմակերպվել է Էրդողանի կառավարության դատապարտման ցույց, որին մասնակցել է 5.000 մարդ: Ծրարները վարչապետ Էրդողանի եւ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի նկարի վրա «Ձեռքերդ հեռու Սիրիայից» մակագրությամբ ցուցապաստառով երթ են կազմակերպել: Երթի ընթացքում նրանք վանկարկել են. «Նահանգապետ, հրաժարական տուր», «Մարդասպանը ԱՄՆ-ն է, Էրդողանի կառավարությունը՝ նրա գործակիցը», «Էրդողանից հրաժարական ենք պահանջում», «Սիրիան Էրդողանին գերեզման է դառնալու»:

Համանման ցույց կազմակերպվել է նաեւ Ստամբուլի Շիշլի վարչական տարածքում, հենց Էրդողանի կուսակցության տարածքային վարչության շենքի առջեւ:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Փորձարկվել է անօդաչու մարդատար ինքնաթիռ

**Բրիտանական ASTRAEA կոնսորցիումը, որի մեջ մտնում են Rolls-Royce PLC, Cassidian ընկերությունները, ինչպես նաեւ BAE Sistems պաշտպանական ընկերությունը, նախագծել է 19 ուղեւորի համար նախատեսված անօդաչու ինքնաթիռ, որը հանդերձավորված է պտուտակային շարժիչներով եւ խոչընդոտներ հայտնաբերելու ու դրանցից խուսափելու հատուկ համակարգերով: Օդանավում գտնվող սարքը անընդհատ փնտրում է խոչընդոտներ (օրինակ, ուրիշ օդանավեր): Համակարգը ստուգել են քաղավիացիայի բրիտանական վարչության փորձագետները: Նրանք պնդում են, որ օդանավը կարող է ուղարկել օդաչուներին հասկանալի ազդանշաններ:**

**Նոր օդանավի ստեղծման վրա ծախսվել է 62 մլն ֆունտ ստեռլինգ, հաղորդում է BBC-ն:**



**Անօդաչու մարդատար ինքնաթիռը փորձնական թռիչք է կատարել բրիտանական Ուորթոն քաղաքից մինչեւ շոտլանդական Ինվերնես քաղաք՝ մոտ 800 կիլոմետր: Ի դեպ, այդ տարածքով թռչում են նաեւ ուրիշ օդանավեր: Ճիշտ է, ապրիլին անցկացված այդ փորձարկման ժամանակ նոր օդանավը լիովին ինքնուրույն չի թռել. վերելացքը եւ վայրէջքը իրականացրել են ներսում եղած օդաչուները: Սակայն այդ երկու գործողությունների արանքում կառավարումը ստանձնել էին երկրի վրա գտնվող օպերատորները:**

**Ներկայումս գլխավոր խնդիրը խոչընդոտների հայտնաբերման ու խուսանավման համակարգի կատարելագործումն է: Դա կլինի անօդաչու մարդատար ինքնաթիռի անվտանգության գրավականը: Նախագծողները մտածում են նաեւ ավելի մեծ անօդաչու մարդատար ինքնաթիռ ստեղծելու մասին:**

ԱՄՆ

# Փոխհրաձգություն Նոր Օռլեանի շքերթի օրը

**Ամերիկյան Նոր Օռլեան քաղաքում կիրակի հետմիջօրեին փոխհրաձգություն է տեղի ունեցել Մայրերի օրվա առթիվ կազմակերպված շքերթի ժամանակ:**

**Ոստիկանության ներկայացուցիչների խոսքերով, վիրավորվել է 19 մարդ՝ 10 տղամարդ, 7 կին եւ 2 երեխա: Իշխանություններն ասում են, թե տուժածների մեծամասնության վերքերը կյանքի համար վտանգավոր չեն:**

**Ֆրանսպրեսը վկայակոչում է ականատեսների, որոնք պնդում են, թե օգտագործվել են հրազենի տարբեր տեսակներ:**

**Ոստիկանությունը որոնում է կասկածյալներին: Ոմանք տեսել են, թե պատահարի վայրից ինչպես են փախչում երեք զինված տղամարդիկ: Ոստիկանության ավագ սպաներից մեկը պատմել է, որ «ամեն ինչ տեղի ունեցավ վայրկյանների ընթացքում»:**

**Չարագործների ձերբակալությանը նպաստող տեղեկությունների համար բնակիչներին խոստացել են 2,5 հազար դոլար պարգեւավճար:**

**Իրավապահները փորձում են պարզել միջադեպի պատճառները: ՀԴԲ ներկայացուցիչ Մերի Բեթ Ռոումիգի խոսքերով, իրենք «հիմքեր չունեն կարծելու, թե դա ահաբեկչություն է»: Ենթադրվում է, թե դա սոսկ «փողոցային բռնություն է»:**

**Փոխհրաձգության պահին փողոցի խաչմերուկում առնվազն 200 մարդ է եղել: BBC-ի թղթակիցը մանրամասնում է, որ միջադեպը տեղի է ունեցել Նոր Օռլեանի աղքատ շրջանում, որը մինչեւ օրս լիովին չի ազատվել «Կատրինա» ծովամրրիկի հետեւանքներից:**

**Քաղաքում մարդաշատ միջոցառման ժամանակ նախորդ միջադեպը տեղի էր ունեցել 2013-ի փետրվարին՝ Բարեկենդանի ամենամյա կառնավալի ժամանակ, երբ Բուրբոն փողոցում փոխհրաձգության հետեւանքով վիրավորվել էր 4 մարդ:**

# Պակիստանի ընտրություններում հաղթել է «Մահմեդական լիգան»

## *Նավազ Շարիֆը 3-րդ անգամ կդառնա վարչապետ*




Պակիստանում անցկացված խորհրդարանական ընտրություններում հաղթել է նախկին վարչապետ, 63-ամյա Նավազ Շարիֆի «Մահմեդական լիգան»: Շարիֆը պատրաստվում է 3-րդ անգամ զբաղեցնել վարչապետի պաշտոնը: Նա եւ իր զինակիցները արդեն խորհրդակցություններ են սկսել նոր կառավարություն կազմելու նպատակով:

Ընտրություններում երկրորդ արդյունքն արձանագրեց հայտնի մարզիկ Իմրան Խանի «Արդարության շարժում» կուսակցությունը: Ինքը՝ Խանը, ներկայումս հիվանդանոցում է. նա տուժել է հանրահավաքներից մեկի ժամանակ:

Ամերիկյան «Ուոլ Սթրիթ ջոռնըլ» թերթը տպագրել է հարցազրույց Նավազ Շարիֆի հետ, որը խաղաղարար քաղաքական գործիչ դառնալու մտադրություն է արտահայտել: Շարիֆը խոստանում է բարելավել Պակիստանի հարաբերությունները ոչ միայն ԱՄՆ-ի, այլեւ հարեւան Հնդկաստանի եւ Աֆղանստանի հետ:

«Շարիֆը վստահ է, որ ԱՄՆ-ի հետ փոխզիջման կհասնի վիճելի հարցերի, օրինակ՝ սահմանամերձ տարածքներին ամերիկյան անօդաչու ինքնաթիռների հարվածների հարցի առնչությամբ», գրում է թերթը:

Շարիֆն առհասարակ շատ լավատեսորեն է տրամադրված: Նա հայտարարել է, թե չի վախենում նոր զինվորական հեղաշրջումից, ինչպես դա եղավ 1999-ին, երբ իրեն փոխարինեց Փերվեզ Մուշարաֆը: Շարիֆը կարծում է, որ ինքը ստիպված չի լինի հանուն իշխանության մարտնչել թշնամաբար տրամադրված զինվորական վերնախավի դեմ:

Սակայն «Բիզնես ուիք» հանդեսը նշում է, որ Շարիֆի կառավարությունը կբախվի տնտեսական լուրջ խնդիրների, քանի որ վերջին հինգ տարում Պակիստանի տնտեսության աճի մակարդակը կիսով չափ կրճատվել է:

Էներգետիկ ճգնաժամը ձւ ծայրահեղականության ալիքը իրենց հերթին ազդում են ժողովրդի կենսամակարդակի վրա: Բացի դրանից, նոր կառավարությունը պետք է հարկային լայն բարեփոխումներ իրականացնի, իսկ նման փոփոխություններն անհնար են առանց քաղաքական ուժերի մեծամասնության աջակցության: Այնպես որ Շարիֆը ստիպված կլինի փոխզիջում գտնել ընդդիմախոսների հետ:

Երկրի ներկայիս դժվարությունների հիմքում տարբեր ցեղերի եւ կրոնական խմբերի բարդ փոխհարաբերություններն են, եւ առաջիկայում իրավիճակը հազիվ թե բարելավվի:

# Էդուարդ Միրզոյանի տարեդարձն առաջին անգամ առանց նրա

Էդուարդ Միխայլովիչ Միրզոյանի մասին՝ թե՛ որպես կոմպոզիտորի, թե՛ որպես մարդու շատ-շատ է գրվել, խոսվել եւ դեռ պետք է գրվի ու խոսվի:

Սակայն չեմ կարող չարտահայտվել հիմա, քանի որ սա առաջին անգամ է, որ մայիսի 12-ին՝ նրա տարեդարձին, չզանգահարեցի եւ չշնորհավորեցի նրան...



Խոսքերն անզոր են՝ արտահայտելու համար այն թախիծն ու ցավը, երբ իմացա նրա հեռանալու մասին: Այնպիսի զգացում ունեցա, որ կարծես Հայաստանը տեղնուտեղը դատարկվեց: Հոկտեմբերի 8-ին թռչել-հասնել նրա հուղարկավորությանը անհնար էր ինձ համար: Սակայն հաջողեցրի նույն օրը, նույն ժամին այստեղ՝ Ստոկհոլմի եկեղեցիներից մեկում (Սուրբ Կլարայում) կազմակերպել համերգի եւ ասմունքի միջոցառում՝ նվիրված Միրզոյանի հիշատակին:

Հնչեցին շվեդերեն թարգմանված հայ բանաստեղծության նմուշներ (Կոստան Զարյան, Պարույր Սեւակ, Սիլվա Կապուտիկյան): Երաժշտական մասը բացվեց Միրզոյանի մտերիմ ընկերոջ՝ Ալեքսանդր Հարությունյանի «Երեկոն Արարատյան դաշտում» դաշնամուրային ստեղծագործությամբ: Անշուշտ, ծրագրում ներառնված էր նաեւ իր՝ Միրզոյանի ստեղծագործությունը, շատերին ծանոթ «Տխուր վալսը»: Պատիվ համարեցի շվեդ ունկնդրին ներկայացնել մեր կոմպոզիտորին, ում մոտ սկսել էի կոմպոզիցիայի դասեր, բայց ստիպված ընդհատել՝ ամուսնության բերումով կյանքս շարունակելով Շվեդիայում:

Անշուշտ, տարիքով մեծ էր Էդուարդ Միրզոյանը եւ առողջությունն էլ տկարացել էր վերջին տարիներին, խոսում էր դժվարությամբ, բայց մնում էր Հայաստանի, հայ արվեստի կարեւոր սյուներից մեկը: Նրա մեծությունը, խորությունը հայտնի էր բոլորին: Տարբեր անձանց հետ խոսակցությունների ընթացքում ի հայտ էր գալիս, որ նա զարգացրել, կրթել էր մի շարք երաժշտական խմբեր, շատերին էր օգնել՝ գտնելու իրենց ճիշտ ուղին, իր գիտելիքներից եւ փորձից բաժին էր հանել շատ-շատերի: Անգամ հեռավորության վրա, հեռախոսով նա կարողանում էր իր կարճ, լակոնիկ պատասխանով գոհացնել եւ ամեն ինչ տեղը դնել:

Մի քանի տարի առաջ Ստոկհոլմում Նոր տարվա հանդիսության ժամանակ, երբ պիտի կատարեի Ամանորյա շվեդական ծրագիր, ցանկություն ունեցա կատարել նաեւ հայկական որեւէ գործ եւ զանգահարեցի Էդուարդ Միրզոյանին՝ խորհուրդ հարցնելու, եթե կան Նոր տարվա մասին նոր երգեր: Ի թիվս տարբեր երգերի, նա նշեց նաեւ հանրահայտ «Տոնածառ ջան, տոնածառ» երգը, որը թեեւ շատ պարզունակ է, սակայն՝ գրավիչ, եւ որը, պարզվում է, գրել է կոմպոզիտորի հայրը՝ երգահան Միքայել Միրզայանը (այո, Միրզայա՛ն): Այդ երգն էլ սովորեցրի մի շվեդ երգչի, որը, չնայած երգի մանկական բնույթին, կատարեց համերգի ընթացքում:

Արդեն քսան տարի է բնակվում եմ Շվեդիայում: Այս տարիների ընթացքում մշտապես կապ եմ պահպանել Էդուարդ Միխայլովիչի հետ եւ համարում եմ նրան իմ հոգեւոր հայրը: Երբ որդուս՝ Յուհաննեսին կամ պարզապես Հովիկին պիտի մկրտեինք Սբ. Էջմիածնում, հարցրի, եթե նա եւ կինը կհամաձայնվեն դառնալ որդուս կնքահայրը եւ կնքամայրը: Միրզոյան ամուսինները սիրով համաձայնեցին: Եվ հուզիչ էր ինձ համար տեսնել, որ երաժիշտ դարձած որդիս, լսելով Էդուարդ Միրզոյանի մահվան լուրը, քրոջ հետ միասին ինքնաբուխ գրեցին իմ սովորեցրած հայերեն տառերով. «Ես շատ տխուր եմ սիրելի Էդիկ պապիկի մահվան համար: Հովիկ թոռնիկ՝ Ստոքհոլմից եւ Սոնա Մարիա»:

... Այժմ մեր կապը շարունակվում է Միրզոյանների օջախի հետ, որը կենդանի է պահում կոմպոզիտորի երկար տարիների կյանքի ընկերուհին՝ տիկին Հեղինե Միրզոյանը, որը տասնամյակներ շարունակ եղել է Էդուարդ Միրզոյանի պահապան հրեշտակն ու ապավենը:

**ԿԱՐԻՆ ՀԵԼՄԱՆ-ԳԵՎՈՐԳՅԱՆ**
**Դաշնակահարուհի, երգահան**
**Ստոկհոլմ, Շվեդիա**

# Ստեղծագործական նոր հարթակ՝ նոր սերնդի համար

## *ՎիվաՍել-ՄՏՍ-ն դարձել է «Հազարան բլբուլ» հանրապետական երկրորդ մրցույթ-փառատոնի գլխավոր հովանավորը*

Մանկապատանեկան երաժշտական բեմադրությունների «Հազարան բլբուլ» մրցույթ-փառատոնը շնորհալի պատանիներին բացահայտելու եւ նրանց ստեղծագործական միտքը խրախուսելու նախաձեռնություններից մեկն է: Ամենամյա փառատոնը կազմակերպվում է երկրորդ անգամ՝ ՀՀ մշակույթի նախարարության, «Առաջ, երեխաներ» կրթամշակութային հասարակական կազմակերպության եւ «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամի նախաձեռնությամբ: Այն կանցնի երկու փուլով եւ կեզրափակվի գալա-համերգով: Փառատոնի գլխավոր հովանավորը ՎիվաՍել-ՄՏՍ-ն է:



«Հազարան բլբուլը բնության զարթոնքի, գեղեցկության, արդարության եւ ներդաշնակության խորհրդանիշն է: Այս նախաձեռնությունը աշխարհն իրական գույներով տեսնելու եւ ավելի գունեղ դարձնելու միջոցներից մեկն է: Երեխաների մեջ տաղանդի փնտրտուքը բխում է քաղաքակիրթ հասարակության շահերից եւ կարող է հրաշալի արդյունք արձանագրել, երբ գործի դրված ջանքերը նույնքան հետեւողական լինեն, որքան հայկական հեքիաթներում առասպելական թռչունին հասնելու նկարագրվող նպատակասլացությունը: Միջոցառումը շատերին կօգնի փնտրել ու փայփայել իր մեջ ապրող երեխային եւ աշխարհը դարձնել ավելի լուսավոր»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Այս տարի մրցույթ-փառատոնին մասնակցելու համար մայրաքաղաքից եւ ՀՀ մարզերից հայտագրվել է երաժշտական 24 ներկայացում: 1-ին փուլի դիտումների արդյունքում, մրցութային հանձնաժողովը ընտրել է դրանցից 10, որոնք մայիսի 12-15-ը ներկայացվելու են 2-րդ փուլում: Եռօրյա մրցույթից հետո, հանձնաժողովականները դրանցից ընտրելու են լավագույն 6-ը: Հաղթող խմբերը հունիսի 1-ին եւ 5-ին հանդես են գալու եզրափակիչ գալա-համերգներով:

Մրցույթ-փառատոնի առաջին գալա-համերգը լինելու է Գյումրի քաղաքի Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում հունիսի 1-ին:

Երկրորդ գալա-համերգը կկայանա Երեւանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում հունիսի 5-ին: Փառատոնի պաշտոնական բացումը կայացավ մայիսի 12-ին Համազգային պետական թատրոնում:

## ԼՐԱՀՈՍ

# Թոնի Այոմին ուղերձը հատուկ «Դորիանսի» համար

Ինչպես «**Ազգն**» արդեն տեղեկացրել է, Black Sabbath խմբի կիթառահար Թոնի Այոմին Lonely Planet երգի համահեղինակն է, որով Dorians-ը ներկայացնում է Հայաստանը Եվրոտեսիլին, որը օրերս տեսաուղերձ է ձայնագրել իր եվրոպացի երկրպագուների համար՝ կոչ անելով մայիսի 16-ին կայանալիք Եվրոտեսիլի կիսաեզրափակչում քվեարկել հայկական Dorians խմբի օգտին:

Երաժշտի պաշտոնական կայքում՝ **www.iommi.com**-ում, վիդեոն ուղեկցվում է հետեւյալ գրառումով. «Մեր համաշխարհային համերգային շրջագայության առաջին մասն ավարտվել է եւ մենք տուն ենք վերադառնում: Սակայն մինչ մենք կվերսկսենք շրջագայությունը Black Sabbath-ի հետ, ես ունեմ իմ եվրոպացի երկրպագուների աջակցության կարիքը՝ դիտե՛ք տեսահոլովակը»:

Երաժիշտն ասել է նաեւ, որ սովորաբար չի դիտում Եվրոտեսիլը, սակայն այս անգամ կհետեւի մրցույթի ընթացքին հեռուստացույցով:

# Hollywood Non-Stop համերգային եւս մի ծրագիր

Արամ Խաչատրյան համերգասրահում մայիսի 15-ին եւ 16-ին տեղի կունենա Hollywood Non-Stop համերգային ծրագիրը, որի մեկնարկը տրվել է դեռեւս 2012թ. եւ արդեն հասցրել է հաջողություններ ունենալ:

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը երեկ լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ Hollywood Non-Stop-ը բավական հետաքրքրական նախագիծ է. «Ներկա եմ եղել նախագծի համերգներին Վանաձորում ու Երեւանում, որի ընթացքում հնչում են հոլիվուդյան հանրահայտ ֆիլմերի լավագույն մեղեդիները Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարմամբ»:

Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանն ընդգծում է, որ Hollywood Non-Stop-ն առաջին հերթին ապացուցում է, որ երիտասարդները սիրում են դասական երաժշտություն. «Այս նախագիծը երիտասարդության եւ երաժշտության սինթեզն է»:

Ծրագրում կհնչեն «Գլադիատոր», «Կարիբյան ծովի ծովահենները», «Կնքահայրը», «Մի անգամ Ամերիկայում», «Ռոմեո եւ Ջուլիետ», «Աստղային պատերազմներ», «Առաքելություն» եւ այլ կինոնկարների մեղեդիներ:

Նշենք, որ Hollywood Non-Stop ծրագիրը Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարմամբ ներկայացվել է Երեւանյան 8 բուհերում, որտեղ ավելի քան 6000 ուսանողներ ունկնդրել են հոլիվուդյան ֆիլմերի երաժշտությունը: Իսկ արդեն 2013 թվականին նախագիծը ներկայացվել է նաեւ հանրապետության մարզերում՝ Գյումրիում, Վանաձորում, Եղեգնաձորում, Արտաշատում, իսկ առաջիկայում նախատեսվում է նաեւ Արցախում:

Ընդգծենք, որ ՀՊԵՆ-ն բոլոր համերգների յուրաքանչյուր գնված տոմսի արժեքի 10%-ը նվիրաբերելու է «Նվիրիր կյանք» բարեգործական հիմնադրամին, որն ուղղված է քաղցկեղով եւ արյան հիվանդություններով տառապող հայ մանուկների կյանքի փրկությանը:

Համերգները տեղի են ունենում ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության հովանավորությամբ:

Մ. Հ.

# «Արտ-ֆեստը» մեկնարկեց ֆլեշմոբով

Երեկ մեկնարկեց «Արտ-ֆեստ» առաջին հանրապետական երիտասարդական բաց փառատոնը, որը կրում էր «Մեկ տանիքի ներքո» խորագիրը: Փառատոնի բացումը տեղի ունեցավ Հյուսիսային պողոտայում՝ ֆլեշմոբով, որին մասնակցելու համար պարտադիր չէ պարային կրթություն ունենալ:




Պարային համարների համակարգողը Թենի Մաթյանն է, որը բեմադրել էր աշխույժ պարեր՝ խառնելով պարային մի քանի ոճեր:

Ի դեպ, փառատոնին 170-ից ավելի հայտատուներ են եղել, որոնցից ընտրվել է 130-ը: Նշենք, որ փառատոնին կարող են մասնակցել 16-35 տարեկան ստեղծագործողներ: Բոլոր մասնակիցներին կտրվեն մասնակցության դիպլոմներ, կլինեն նաեւ ոսկե, արծաթե, բրոնզե մրցանակներ, իսկ ցուցադրությունների մուտքը կլինի անվճար:

Թատերական արվեստ-ներկայացումները կցուցադրվեն մայիսի 13-19 ԵԹԿՊԻ-ի Ուսումնական թատրոնում (Երեւան, Ամիրյան 26) եւ Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում (Երեւան, Սայաթ-Նովա 4):

Կինոարվեստ-ֆիլմերը կցուցադրվեն մայիսի 16 եւ 18-ին, ժամը 20:30, Նարեկացի արվեստի միությունում (Երեւան, Վարդանանց 16/1)

Կերպարվեստ-ստեղծագործությունները կցուցադրվեն մայիսի 15, 17-ին, ժամը 14:00-19:00 (Մարտիրոս Սարյանի անվան պուրակում)

Մ. Հ.

# Գեւորգ Գանտահարյանի հիշատակին

«Ազդակ» օրաթերթի «Փյունիկ» սրահում կայացել է լիբանանահայ մտավորական, երաժշտագետ, կրթամշակութային գործիչ Գեւորգ Գանտահարյանի հիշատակին նվիրված միջոցառում: Այն կազմակերպել էր Համազգայինի Լիբանանի շրջանային վարչությունը:

Սփյուռքահայ մտավորականին նվիրված հուշ-երեկոյին խոսք են արտասանել՝ Համազգայինի անունից գրող Սարգիս Կիրակոսյանը, Համազգայինի ճեմարանի տնօրեն Տիգրան Ջինբաշյանը, Հունաստանից հատուկ Բեյրութ ժամանած հասարակական գործիչ եւ Գեւորգ Գանտահարյանի աշակերտ Միհրան Քյուրտօղլյանը եւ Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքի տեսուչ Նարեկ արք.: Գեղարվեստական հայտագրով հանդես են եկել Գեւորգ Գանտահարյանի ղեկավարած «Շնորհալի» եւ «Գուսան» երգչախմբերը:

Բանախոսներն ընդգծել են ազնիվ հայի, մանկավարժի, երաժշտագետի եւ հասարակական գործչի նկարագրային առաքինությունները ու հայ կյանքում ներդրած այն վիթխարի վաստակը, որի տակ արձանագրվել է Գեւորգ Գանտահարյանի անունը:

*«ԱԶԴԱԿ»*

# Գոռ Մինասյանը երիտասարդների աշխարհի փոխչեմպիոն



Լիմայում ավարտվեց ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունը, որին Հայաստանից մասնակցեցին 3 ծանրորդներ: Մրցումների վերջին օրը մրցահարթակ դուրս եկավ գերծանրքաշային Գոռ Մինասյանը, որը հայ ծանրորդներից բոլորից հաջող հանդես եկավ՝ նվաճելով աշխարհի փոխչեմպիոնի տիտղոսը:

Աշխարհի չեմպիոնի կոչման համար հիմնական պայքարն ընթացավ Գոռ Մինասյանի եւ վրացի Լաշա Տալախաձեի միջեւ: Պոկում վարժությունում Գոռը հաջորդաբար բարձրացրեց 177 եւ 183 կգ, իսկ ահա 3-րդ մոտեցման ժամանակ չկարողացավ իրեն ենթարկել 187 կգ-անոց ծանրաձողը: Իսկ Տալախաձեն մրցումները սկսեց 185 կգ-ով ու ավարտեց 190 կգ-ով՝ արժանանալով ոսկե մեդալի: Գոռը դարձավ արծաթե մեդալակիր:

Հրում վարժությունը հայ ծանրորդն անթերի կատարեց՝ հաջորդաբար բարձրացնելով 206, 213 եւ 220 կգ: Վրացի ծանրորդին 2 մոտեցումն էլ բավարար էր աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար: Բարձրացնելով 221 կգ, նա երկամարտի 411 կգ արդյունքով հռչակվեց չեմպիոն: Իսկ Գոռ Մինասյանը երկամարտի 403 կգ (183+220) արդյունքով դարձավ աշխարհի փոխչեմպիոն՝ արծաթե մեդալ նվաճելով նաեւ հրում վարժությունում: Բրոնզե մրցանակակիր դարձավ Ռուսաստանը ներկայացրած Կարեն Մարտիրոսյանը, որը երկամարտում ցույց տվեց 385 կգ (180+205) արդյունք: Նա մեկ բրոնզե մեդալ էլ նվաճեց պոկում վարժությունում:

Հիշեցնենք, որ Իզաբելա Յայլյանը մինչեւ 58 կգ քաշային կարգում պոկում վարժությունում բրոնզե մեդալ էր նվաճել, իսկ երկամարտի 194 կգ (87+107) արդյունքով զբաղեցրել էր 4-րդ տեղը: Մինչեւ 77 կգ քաշային կարգում Անդրանիկ Կարապետյանը երկամարտի 340 կգ (160+180) արդյունքով դարձել էր 3-րդ մրցանակակիր, արծաթե եւ բրոնզե մեդալներ էր նվաճել առանձին վարժություններում:

# Շիրակցիներին հանձնվեցին ոսկե մեդալներն ու չեմպիոնական գավաթը

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունում հայտնի դարձան բոլոր մրցանակակիրները: Բրոնզե մեդալներին 2-րդ տարին անընդմեջ արժանացան «Գանձասարի» ֆուտբոլիստները, որոնք Գյումրիում «Շիրակի» հետ հանդիպումն ավարտեցին ոչ-ոքի՝ 2-2:**

**Խաղն անցավ բավականին հետաքրքրական պայքարում: Արդեն 10-րդ րոպեին «Շիրակը» կարող էր բացել հաշիվը, սակայն Դամե Դիոպը չիրացրեց 11 մ հարվածը: «Գանձասարի» դարպասապահ Արսեն Բեգլարյանը հետ մղեց գնդակը: Առաջին խաղակեսում շիրակցիները եւս 2 գոլային պահ չօգտագործեցին: Բայց մինչեւ ընդմիջման գնալը Դամե Դիոպը քավեց մեղքը՝ գլխի հարվածով բացելով հաշիվը:**

**2-րդ խաղակեսի սկզբնամասում «Գանձասարին» հաջողվեց հաշվի մեջ առաջ անցնել: Աչքի ընկան թիմի փորձառու նորեկներ Սամվել Մելքոնյանն ու Նարեկ Բեգլարյանը: Խաղավարտից 9 րոպե առաջ «Շիրակը» վերականգնեց հավասարակշռությունը: 11 մ հարվածը դիպուկ իրացրեց թիմի ռմբարկու Լամին Լի Յորոն՝ խփելով առաջնությունում 18-րդ գնդակը:**

**Գյումրիում գրանցվեց մարտական ոչ-ոքի: Խաղից հետո հենց խաղադաշտում ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը շիրակցիներին պարգեւատրեց ոսկե մեդալներով, իսկ թիմի ավագ Տիգրան Դավթյանին հանձնեց չեմպիոնի գավաթը:**

**Գյումրիում գրանցված ոչ-ոքին ձեռնտու էր «Գանձասարին», քանի որ բրոնզե մեդալներին հավակնող «Փյունիկն» ու «Իմպուլսը» պարտվեցին: «Գանձասարն» իրավունք ստացավ Հայաստանը ներկայացնելու Եվրոպայի լիգայի մրցաշարում, որտեղ հանդես կգան նաեւ «Միկան» ու «Փյունիկը»: Նրանց մրցավեճի ելքը վճռեց «Միկայի» պաշտպան Անդրանիկ Ոսկանյանի խփած միակ գոլը:**

**«Իմպուլսն» էլ 1-4 խոշոր հաշվով պարտվեց «Ուլիսին»: Վերջինիս կազմում 2 գոլ խփեց Մկրտիչ Նալբանդյանը, մեկական անգամ աչքի ընկան Շոթա Ջիքիան ու Նորայր Սահակյանը: «Իմպուլսից» միակ գոլի հեղինակը Վաչիկ Եղիազարյանն էր:**

**Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Աբովյանում կայանալիք «Արարատ»-«Բանանց» հանդիպումը, որը բախտորոշ նշանակություն ուներ մրցող թիմերի համար բարձրագույն խմբում տեղը պահպանելու համար մղվող պայքարում: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: Հաշիվը 2-րդ խաղակեսում բացեց «Բանանցի» ֆուտբոլիստ Հովհաննես Համբարձումյանը, որին «Արարատը» պատասխանեց Գեւորգ Նռանյանի խփած գոլով: Թե որ թիմը հրաժեշտ կտա բարձրագույն խմբին, հայտնի կդառնա մայիսի 18-ին կայանալիք ավարտական տուրում: «Արարատը» մրցելու է «Փյունիկի» հետ, իսկ «Բանանցի» մրցակիցը կլինի «Ուլիսը»: 42-րդ տուրի մյուս 2 հանդիպումներն այլեւս էական նշանակություն չեն ունենա:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շիրակ | 41 | 25 | 10 | 6 | 68-38 | 85 |
| 2. Միկա | 41 | 24 | 7 | 10 | 57-39 | 79 |
| 3. Գանձասար | 41 | 17 | 13 | 11 | 47-37 | 64 |
| 4. Իմպուլս | 41 | 18 | 6 | 17 | 66-63 | 60 |
| 5. Փյունիկ | 41 | 18 | 6 | 17 | 65-51 | 60 |
| 6. Ուլիս | 41 | 10 | 12 | 19 | 39-50 | 42 |
| 7. Արարատ | 41 | 9 | 6 | 26 | 28-67 | 33 |
| 8. Բանանց | 41 | 5 | 16 | 20 | 37-62 | 31 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 22 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 18 |
| Լամին Լի Յորո | «Շիրակ» | 18 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 14 |
| Վիուլեն Այվազյան | «Փյունիկ» | 12 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 12 |
| Արսեն Բալաբեկյան | «Ուլիս» | 10 |
| Կամո Հովհաննիսյան | «Փյունիկ» | 10 |

# Մխիթարյանն արդյունավետության նոր ռեկորդ սահմանեց

**Ուկրաինայի առաջնության 28-րդ տուրում 2 անգամ գրավելով Սիմֆերոպոլի «Տավրիայի» դարպասը, Հենրիխ Մխիթարյանն իր գոլերի թիվը հասցրեց 24-ի եւ արդյունավետության նոր ռեկորդ սահմանեց: Մինչ այդ Ուկրաինայի առաջնություններում մեկ մրցաշրջանում բոլորից շատ գոլեր (22-ական) էին խփել Կիեւի «Դինամոյի» նախկին ֆուտբոլիստներ Սերգեյ Ռեբրովն (1997/98-ին) ու Մաքսիմ Շացկիխը (2002/03-ին):**

**Առաջնության ավարտին դեռ 2 տուր կա, այնպես որ Մխիթարյանը պետք է փորձի գերազանցել նաեւ «Շախտյորի» արդյունավետության բացարձակ ռեկորդը, որը պատկանում է թիմի հանրահայտ ռմբարկու Վիտալի Ստարուխինին: Վերջինս 1979-ին ԽՍՀՄ առաջնությունում 26 գոլի հեղինակ է դարձել:**

**Հենրիխ Մխիթարյանի գործակալ Մինո Ռայոլան Corriero dello Sport-ի թղթակցին տեղեկացրել է, որ հայ ֆուտբոլիստի տրանսֆերի հարցով բանակցում է Թուրինի «Յուվենտուսի» հետ: Ըստ Ռայոլայի, եթե այդ տեղափոխությունը չկայանա, ապա կդիտարկեն եվրոպական առաջատար այլ ակումբներից ստացված առաջարկությունները:**

# Բրազիլահայ շախմատիստը միջին դիրքերում է

Ամերիկյան մայրցամաքի շախմատի առաջնությունում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 8 տուրից հետո վաստակած 5,5 միավորով 13-րդ տեղում է: 6,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Խուլիո Գրանդան, Լազարո Բրուզոնը, Ռեյնալդո Ստարեսը եւ Էդուարդո Իտուրիզագան:

## ՀԱՄԱՌՈՏ

# 4 հայ շախմատիստներ հետապնդում են առաջատարին

**Լեհաստանում ընթացող շախմատի Եվրոպայի անհատական առաջնության 7 տուրից հետո հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Սերգեյ Մովսիսյանը, Գաբրիել Սարգսյանը, Տիգրան Պետրոսյանն ու Հրանտ Մելքումյանը, որոնք վաստակել են 5-ական միավոր: 6 միավորով առաջատարն ուկրաինացի Ալեքսանդր Մոիսեենկոն է, որին 5,5 միավորով հետապնդում են 7 շախմատիստներ: 4,5-ական միավոր ունեն Զավեն Անդրեասյանը, Արման Փաշիկյանը եւ Ռոբերտ Աղասարյանը:**

## ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Դարչինյանը նոկաուտի ենթարկեց մեքսիկացուն




**Քաշային 2 կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Վախթանգ Դարչինյանը, որը վերջերս պայմանագիր է կնքել Top Rank պրոմոութերական ընկերության հետ, ԱՄՆ-ի Լարեդո քաղաքում անցկացված 10-ռաունդանոց մենամարտում նոկաուտի ենթարկեց մեքսիկացի Խավիեր Գալյոյին:**

**37-ամյա հայ բռնցքամարտիկի առավելությունը զգալի էր: Մենամարտի ընթացքում 29-ամյա Գալյոն մի քանի անգամ հայտնվեց նոկդաունում: Իսկ երբ 4-րդ ռաունդում Վախթանգի հուժկու հարվածից հետո նա 4-րդ անգամ հայտնվեց ռինգի հատակին, մենամարտը դադարեցվեց:**

**Պրոֆեսիոնալ ռինգում դա Դարչինյանի 45-րդ մենամարտն էր, որում հայ բռնցքամարտիկը 39-րդ հաղթանակը տոնեց: 1 մենամարտ ավարտվել է ոչ-ոքի, 5-ում Վախթանգը պարտվել է: Մեքսիկացի բռնցքամարտիկը 7-րդ պարտությունը կրեց անցկացրած 26 մենամարտերում: Նա տոնել է 18 հաղթանակ, մեկ մենամարտ ավարտել է ոչ-ոքի:**

# Տաթեւ Աբրահամյանն արժանացավ բրոնզե մեդալի



**Գրոսմայստեր Տաթեւ Աբրահամյանը դարձավ ԱՄՆ-ի շախմատի կանանց առաջնության բրոնզե մրցանակակիր՝ պարգեւատրվելով 9 հազար դոլարով: Հայ շախմատիստուհին 9 հնարավորից վաստակեց 6,5 միավոր: Չեմպիոնուհու տիտղոսը պաշտպանեց Իրինա Կրաշը, որը մրցաշարի 10 մասնակիցներից միակն էր, որ մնաց անպարտելի: Նա վաստակեց 8 միավոր; Հաղթողին կես միավոր զիջեց Աննա Զատոնսկիխը:**

**Ավարտական 4 տուրերում Տաթեւը հաղթեց Անժելինա Բելակովսկայային եւ Վիկտորիա Նիին, ոչ-ոքի խաղաց Սարահ Չիանգի հետ եւ պարտվեց Իրինա Կրաշին: Դա Աբրահամյանի միակ պարտությունն էր:**

**Տղամարդկանց մրցաշարում Վարուժան Հակոբյանը 9 հնարավորից վաստակած 5 միավորով զբաղեցրեց 11-րդ հորիզոնականը: 6-րդ տուրում նա հաշտություն կնքեց Յակով Նորովիչի հետ, ապա պարտվեց Ալեքսանդր Շաբալովին: Իսկ ավարտական 2 պարտիաներում Վարուժանը հաղթեց Յորգ Սամուէլ-Հասբունին եւ Գրեգորի Կայդանովին:**

**Սամուել Սեւյանը 4 միավորով մրցաշարի 24 մասնակիցների մեջ գրավեց 17-րդ տեղը: Նա հաղթեց Մելիքսեթ Խաչիյանին եւ հաշտություն կնքեց Մարկ Առնոլդի, Յակով Նորովիչի ու Ռոբերտ Հեսի հետ:**

**Վերջնագծում անհաջող խաղաց Մելիքսեթ Խաչիյանը, որին այդպես էլ չհաջողվեց հաղթանակ տոնել: 6-րդ տուրում նա զիջեց Բենջամին Ֆինեգոլդին, իսկ ավարտական 2 պարտիաները Ալեքսանդր Իվանովի ու Մարկ Առնոլդի հետ ավարտեց ոչ-ոքի: Խաչիյանը 3 միավորով զբաղեցրեց նախավերջին՝ 23-րդ հորիզոնականը:**

**Լավագույն արդյունքը ցույց տվեցին Գատա Կամսկին եւ Ալեխանդրո Ռամիրեսը՝ վաստակելով 6,5-ական միավոր: Նրանց միջեւ կանցկացվի արագ շախմատի մրցամարտ չեմպիոնին որոշելու համար:**

# Արոնյանը զիջեց դիրքերը

Նորվեգիայում ընթացող շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Լեւոն Արոնյանը ոչ-ոքի խաղաց Պյոտր Սվիդլերի հետ, իսկ ահա հաջորդ մրցախաղում առաջին պարտությունը կրեց առաջատարից՝ Սերգեյ Կարյակինից: Վերջինս նախորդ տուրում 3-րդ անընդմեջ հաղթանակն էր տոնել Վան Հաոյի նկատմամբ:

Մագնուս Կառլսենը հաշտություն կնքեց Հիկարու Նակամուրայի եւ Պյոտր Սվիդլերի հետ: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Թոփալով-Համեր, Վան Հաո-Ռաջաբով պարտիաները:

Անանդը նախ 3-րդ տուրում հաղթեց Թոփալովին, ապա հաջորդ պարտիայում պարտվեց Նակամուրային: Ռաջաբովն էլ 3-րդ տուրում պարտության մատնեց Համերին:

Երեկ կայացած 5-րդ տուրում Արոնյանը սեւերով մրցեց Ռաջաբովի հետ: 31-րդ քայլին մրցակիցները հաշտություն կնքեցին: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Նակամուրա-Թոփալով, Սվիդլեր-Անանդ պարտիաները:

Տուրի կենտրոնական հանդիպումը մրցաշարի միանձնյա առաջատար Կարյակինի եւ Կառլսենի մրցավեճն էր: Սեւերով խաղացող Կառլսենն անդրանիկ հաղթանակը տոնեց, իսկ Կարյակինն առաջին պարտությունը կրեց: Համերն էլ առաջին հաղթանակը տոնեց Վան Հաոյի հետ պարտիայում:

Չնայած անհաջողությանը, Կարյակինը 4 միավորով գլխավորում է աղյուսակը: 3-ական միավորով առաջատարին հետապնդում են Կառլսենն ու Նակամուրան: Արոնյանն Անանդի, Սվիդլերի եւ Ռաջաբովի հետ ունի 2,5 միավոր:

Այսօր Արոնյանը կխաղա Համերի հետ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ու Թ Յ Ու Ն

**Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմը եւ Երեւանի Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը Երեւանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 22-ի N 899-Ն որոշման համաձայն հայտարարում են մրցույթ Երեւան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների ստորեւ թվարկված գործադիր մարմինների ընտրության (նշանակման) համար:**

▼▼▼

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն վերը թվարկված պաշտոններն զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության գործունակ, չափահաս քաղաքացիները:

**Երեւան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների գործադիր մարմինների (այսուհետ՝ Տնօրենների) ընտրության պարտադիր պայմաններն են՝**

**- համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն**

- ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա, կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, Համապատասխան ոլորտի օրենսդրություն, «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հարկային օրենսդրություն, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք եւ այլ իրավական ակտեր).

- կազմակերպության զարգացման եւ բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն

**Տնօրենի ընտրության (նշանակման) լրացուցիչ պայմաններն են՝**

1) տրամաբանելու եւ տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման անհրաժեշտ իմտություն (տնօրենի պարտականություններն ամբողջական նկարագրված է տվյալ կազմակերպության կանոնադրությունում).

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Ընդունել ի գիտություն, որ Տնօրենների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներն անցկացվելու են Երեւանի քաղաքապետարանի շենքում (Արգիշտի 1) ժամանակացույցով նախատեսված օրերին եւ ժամերին:

| Հ/հ | Մարզադպրոցների անվանումը | Մրցույթի անցկացման ամսաթիվը և ժամը |
|---|---|---|
| | **Երևանի Աջափնյակ վարչական շրջան** | |
| 1 | «Երևանի Աջափնյակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 17.06.2013թ. ժամը 10.00 |
| | **Երևանի Ավան վարչական շրջան** | |
| 2 | «Երևանի Ավանի շախմատի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 17.06.2013թ. ժամը 14.00 |
| 3 | «Երևանի Ավանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 17.06.2013թ. ժամը 14.00 |
| | **Երևանի Արաբկիր վարչական շրջան** | |
| 4 | «Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 18.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| 5 | «Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 18.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| 6 | «Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 18.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| 7 | «Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 18.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| | **Երևանի Էրեբունի վարչական շրջան** | |
| 8 | «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 19.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| | **Երևանի Կենտրոն վարչական շրջան** | |
| 9 | «Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 19.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 10 | «Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 19.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| | **Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան** | |
| 11 | «Երևանի Վահան Ջատիկյանի անվան մարզակումբ» ՀՈԱԿ | 20.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| 12 | «Երևանի Մալաթիա-Սեբաստիայի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 20.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| | **Երևանի Նոր Նորք վարչական շրջան** | |
| 13 | «Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ | 20.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 14 | «Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն» ՀՈԱԿ | 20.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 15 | «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 20.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| | **Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջան** | |
| 16 | «Երևանի Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 21.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| | **Երևանի Շենգավիթ վարչական շրջան** | |
| 17 | «Երևանի Շենգավիթի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 21.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 18 | «Երևանի Շենգավիթի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 21.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 19 | «Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 21.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| | **Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան** | |
| 20 | «Երևանի Քանաքեռ-Զեյթունի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 24.06.2013թ. ժամը՝ 10.00 |
| | **Երևանի քաղաքապետարան** | |
| 21 | «Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 24.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 22 | «Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 24.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 23 | «Երևանի գեղասահքի և տափօղակով հոկեյի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 24.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 24 | «Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | 24.06.2013թ. ժամը՝ 14.00 |
| 25 | «Երևանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | 24.06.2013թ. ժամը՝ 14.00 |

▼▼▼

Դիմող անձինք մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված).

7) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).

9) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Անձը մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներն ապահովվում են թեստային առաջադրանքներով:

Փաստաթղթերն ընդունվում են Երեւանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի ընդհանուր բաժիններում եւ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնում ամեն օր՝ աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը՝ 9.00-ից 18.00-ն (ընդմիջում՝ 13.00 ՎՆ 14.00), բացի շաբաթ եւ կիրակի օրերից, հետեւյալ հասցեներում՝

1. Աջափնյակ՝ Արա Սարգսյան 5, հեռախոս (010) 39-46-60.

2. Ավան՝ Խուդյակովի 222, հեռախոս (010) 62-60-27.

3. Արաբկիր՝ Ն.Զարյան 27, հեռախոս (010) 28-40-91.

4. Էրեբունի՝ Սասունցի Դավթի 87, հեռախոս (010) 57-49-13.

5. Կենտրոն՝ Տերյան 44, հեռախոս (010) 56-44-80

6. Մալաթիա-Սեբաստիա՝ Սեբաստիա 32, հեռախոս (010) 72-28-61.

7. Նոր Նորք՝ Գայի 19, հեռախոս (010) 63-49-10.

8. Նորք-Մարաշ՝ Ա.Արմենակյան 272, հեռախոս (010) 62-51-22.

9. Շենգավիթ՝ Գ.Նժդեհի 26, հեռախոս (010) 44-26-98.

10. Քանաքեռ-Զեյթուն՝ Դավիթ Անհաղթ 11, հեռախոս (010) 24-98-66

11. Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին՝ Արգիշտիի 1, 2-րդ հարկ, 201 եւ 202 սենյակներ, հեռախոսներ՝ (010) 514-135, (010) 514-229:

**Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝ 14.06.2013թ.:**

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 13.5.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: